

Մեծ Պալատ. 2003թ-ի Տարեկան զեկույց
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական
կազմակերպության կողմից

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Մեծ պալատ

2003 թվականի գործունեության տարեկան զեկույց

Յունվար, 2004 թ.

Մեծ Պալատ. 2003թ-ի Տարեկան զեկույց
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական
կազմակերպության կողմից

Մեծ պալատի 2003թ. գործունեության տարեկան զեկույցի թարգմանությունը ոչ պաշտոնական է և կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության ռեսուրսներով՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի (ՄԻԵԿ) համապատասխանության ապահովումը Հայաստանում. ՄԻԵԿ-ի վերաբերյալ տեղեկությունների և նյութերի արդյունավետ տարածման ապահովումը Հայաստանում» Ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ «Ծրագիր»): Իրավական ուղեցույցը Հայաստանում գործող հասարակական կազմակերպություն է, որը կոչված է բարձրացնել Հայաստանի բնակչության և այլ երկրների հայերի իրավունքների նկատմամբ հարգանքն ու մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները՝ օրենքների կիրառման և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում մարդու իրավունքների պաշտպանություն իրականացնելու միջոցով:

Իրավական ուղեցույցը, Ծրագրի իրականացման շրջանակներում համագործակցության և կատարած ներդրումների համար, ցանկանում է երախտիքի խոսք ասել սույն հաշվետվության թարգմանիչ, Իրավական ուղեցույցի իրավական հարցերով փորձնակ ժամնա Բույունկյանին (**Այստեղ տեղադրված են տեղեկություններ ժամնա Բույունկյանի և Իրավական ուղեցույցի իրավական հարցերով այլ փորձնակների մասին**):

Մասնագիտական խմբագիր՝ Նարինե Գասպարյան, «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության նախագահ:

արգմանությունը կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից:

. 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն:
Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

Բովանդակություն

I.	Նախաբան.....	4
II.	Դատարանի կազմը.....	5
III.	Ընդդատության զիջմամբ Մեծ պալատ հանձնված գործեր (կոնվենցիայի 30-րդ հոդված և Դատարանի կանոնակարգի 72-րդ կանոն).....	6
IV.	Հինգ դատավորից բաղկացած հանձնախմբի որոշմամբ Մեծ պալատին հանձնված գործերը.....	7
V.	Լսումներ.....	29
VI.	Փանգատների ընդունելիության մասին որոշումները.....	35
VII.	Վճիռներ.....	35
VIII.	Երրորդ կողմի մասնակցություն.....	47
IX.	43-րդ հոդվածի համաձայն Մեծ պալատի Հանձնախմբի կողմից քննության առնված գործեր.....	48
X.	2003 թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Մեծ պալատի քննության ներքո գտնվող գործերի ցանկ.....	48

I. Նախաբան

2003 թվականին Մեծ պալատում քննվող գործերի քանակը անփոփոխ էր. 17 գործ (23 գանգատների հետ կապված), դրան գումարած տարեսկզբին խորհրդատվական եզրակացության մասին մեկ խնդրանք և 18 գործ (կապված 21 գանգատների հետ) ինչպես նաև տարվա վերջին խորհրդատվական եզրակացության համար արված մեկ խնդրանքը:

Մեծ պալատ են հանձնվել 14 նոր գործեր (կապված 16 գանգատների հետ): Վերոնշյալ գործերից 5-ի կապակցությամբ Պալատը, Կոնվենցիայի 30-րդ հոդվածի համապատասխան, ընդդատությունը զիջել էր Մեծ պալատին (Տե՛ս ներքոհիշյալ Գլուխ 3-ը), իսկ մնացած 9 գործի կապակցությամբ Մեծ պալատի հանձնախումբն ընդունել էր գործի վերաքննության մասին պահանջները՝ Կոնվենցիայի 43-րդ հոդվածի համապատասխան (Տե՛ս ներքոհիշյալ Գլուխ 4-ը):

Մեծ պալատն անցկացրել է 28 նիստ և 9 բանավոր դատական քննություն:

Մեծ Պալատը 6 գանգատների վերաբերյալ ընդունելիության որոշում է կայացրել: Այս բոլոր որոշումները կայացվել են գանգատի ելության վերաբերյալ որոշման հետ մեկտեղ՝ հիմնվելով Կոնվենցիայի 29-րդ հոդվածի երրորդ մասի վրա (Տե՛ս ներքոհիշյալ Գլուխ 6-ը):

Մեծ պալատը կայացրել է 12 վճիռ (19 գանգատների հետ կապված), որոնցից 11-ը՝ ըստ ելության (6 գործի դեպքում՝ ընդդատությա զիջում և 5-ի դեպքում՝ հանձնում) և մեկ խորհրդատվական եզրակացություն (Տե՛ս ներքոհիշյալ Գլուխ 7-ը):

II Դատարանի կազմը

Դատարանի բոլոր դատավորները մասնակցում են Մեծ պալատի աշխատանքին: Յուրաքանչյուր գործի համար Մեծ պալատի կազմը որոշվում է Դատարանի կանոնակարգի 24-րդ կանոնի համապատասխան:

Լյուզիուս **Վիլհելմեր** (Շվեյցարացի), Նախագահ,
Քրիստոս **Ռզակիս** (Հուն), նախագահի Տեղակալ,
Ժան-Պոլ **Կոստա** (Ֆրանսիացի), Նախագահի Տեղակալ,
Ջորջ **Ռեսս** (Գերմանացի), Բաժանմունքի Նախագահ,
Նիկոլաս **Բրատցա** (Բրիտանացի), Բաժանմունքի Նախագահ,
Գոկյուռ **Ժոռունդսոն** (Իսլանդացի),
Ջիովաննի **Բոնելլո** (Մալթացի),
Լյուսիուս **Կաֆլիչ**¹ (Շվեյցարացի),
Լուկիս **Լուկաիդես** (Կիպրոսցի),
Պրանաս **Կյուրիս** (Լիտվացի),
Իռենյո **Կաբրալ Բառետո** (Պորտուգալացի),
Րիգա **Տյուրմեն** (Թուրք),
Ֆրանսուազ **Տյուլկենս** (Բելգիացի),
Վիերա **Ստրազնիկա** (Սլովակ),
Կոռնելիու **Բիրսան** (Ռումինացի),
Պիռ **Լոռենցոն** (Դանիացի),
Քարել **Ժունգվիերթ** (Չեխ),
Մարկ **Ֆիշբախ** (Լյուքսեմբուրգցի),
Վլոդիմիր **Բուտկեվիչ** (Ռեկրահնացի),
Ժոզեֆ **Կասադեվալլ** (Անդորացի),
Բոստջան **Ջուպանսիկ** (Սլովեն),
Նինա **Վաժիկ** (Խորվաթ),
Ջոն **Յեդիգան** (Իռլանդացի),
Վիլհելմինա **Թոմասսեն** (Հոլանդացի),
Մաթթի **Պելլոնպաս** (Ֆինլանդացի),
Մարգարիտա **Ցացա-Նիկոլովսկա** (Մակեդոնիայի նախկին
Հարավսլավական Հանրապետության քաղաքացի),
Հաննա Սոֆի **Գրեվ** (Նորվեգացի),
Անդրաս **Բակա** (Հունգարացի),
Րաիթ **Մարուստ** (Էստոնացի),
Էժիլս **Լեվիթս** (Լատվիացի),
Կրիստակ **Թրաջա** (Ալբան),
Սնեժանա **Բոտուչարովա** (Բուլղարացի),
Մինդիա **Ուգրեխելիդե** (Վրացի),
Անատոլի **Կովլեր** (Ռուս),
Վլադիմիրո **Ջագրեբելսկի** (Իտալացի),
Անտոնելլա **Մյուլարոնի** (Սան Մարինոյից),
Էլիզաբեթ **Ստեհներ** (Ավստրացի),
Ստանիսլավ **Պավլովսչի** (Մոլդավացի),

¹ Դատավորն ընտրվել է Լիխտենշտեյնի անունից:

Լեչ Գառլիկի (Լեհ),
Խավիեր Բորրեգո Բորրեգո² (Իսպանացի),
Էլիզաբեթ Ֆյուրա-Սանդատրոն³ (Շվեդ),
Ալվինա Գյուլունյան (Հայ),
Խանլար Յաժիեվ (Ադրբեջանցի) Դատավորներ,

Պոլ Սահոնի (Բրիտանացի), Քարտուղար,
Վոլֆգանգ Շտրասսեր (Ավստրիացի), Քարտուղարի Տեղակալ:

III. Ընդդատության զիջումը Մեծ պալատին (Կոնվենցիայի հոդված 30 և Դատարանի կանոնակարգի կանոն 72)

Հետևալ հինգ գործերը ընդդատությունը զիջելու մասին
համապատասխան Պալատների որոշումներով հանձնվել են Մեծ պալատին:

(1) **Cooper v. United Kingdom** (Կուպերն ընդդեմ Միացյալ Թագավորության),
no. 48843/99

(2) **Grievs v. United Kingdom** (Գրիվեսն ընդդեմ Միացյալ Թագավորության),
no. 57067/00

Վերոհիշյալ գործերը հանձնվել են Չորրորդ Բաժանմունքի կողմից
2003թ մայիսի 6-ին և փետրվարի 11-ին համապատասխանաբար (Վճիռը
կայացվել է 2003թ դեկտեմբերի 16-ին: Տե՛ս VI Գլուխը ստորև):

(3) **Assanidze v. Georgia** (Ասանիձեն ընդդեմ Վրաստանի), no. 71503/01

Գործը հանձնվել է 2003թ մարտի 18-ին Երկրորդ Բաժանմունքի կողմից
(Լուումը տեղի է ունեցել 2003թ նոյեմբերի 19-ին: Տե՛ս V Գլուխը ստորև):

(4) **Vo v. France** (Վոն ընդդեմ Ֆրանսիայի), no. 53924/00

Գործը հանձնվել է 2003թ. մայիսի 22-ին Երրորդ Բաժանմունքի կողմից
(Լուումը տեղի է ունեցել 2003թ. դեկտեմբերի 9-ին: Տե՛ս V Գլուխը ստորև):

(5) **Perez v. France** (Պերեն ընդդեմ Ֆրանսիայի), no. 47287/99

Գործը հանձնվել է 2003թ հունիսի 5-ին Առաջին Բաժանմունքի կողմից:

Գործը վերաբերում է քրեական գործով քաղաքացիական հայցի
նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությանը, ինչպես նաև
վարույթների ենթադրյալ անարդարացիության հարցերին:

² Ստանձնել է պաշտոնը 2003 թվականի հունվարի 29-ին՝ փոխարինելով պարոն Անտոնիո
Պաստոր Ռիդրուեյոյին:

³ Ստանձնել է պաշտոնը 2003 թվականի մարտի 1-ին՝ փոխարինելով տիկին Էլիզաբեթ Փալմին:

IV. Հինգ դատավորից բաղկացած հանձնախմբի որոշմամբ Մեծ պալատին հանձնված գործերը

2003թ. Մեծ պալատի հինգ դատավորից բաղկացած հանձնախումբը (Կոնվենցիայի 43-րդ հոդված 2-րդ կետ և Դատարանի կանոնակարգի կանոն 24-ի 5-րդ կետ) չորս միստ է գումարել (2003թ մայիսի 21-ին, հուլիսի 9-ին, սեպտեմբերի 24-ին և դեկտեմբերի 4-ին) ուսումնասիրելու համար Մեծ պալատին գործերը հանձնելու մասին կողմերի՝ Կոնվենցիայի 43-րդ հոդվածի հիման վրա ներկայացրած պահանջները: Հանձնախումբն ուսումնասիրել է ընդհանուր առմամբ 87 գործի հետ կապված պահանջներ, որոնցից 13-ը ներկայացվել էին համապատասխան Կառավարությունների կողմից (գործերից երկուսի պարագայում միաժամանակ և Կառավարությունը, և դիմումատուն պահանջում էին գործի հանձնումը)(տե՛ս հավելված 1-ի ցանկը):

Հանձնախումբը հետևալ իննը գործով ընդունել է հանձնման մասին պահանջները:

(1) Smoleanu v. Romania (Սմոլանուն ընդդեմ Ռումինիայի), no 30324/96

Ելենա Սմոլանուն Ռումինիայի քաղաքացի է, ծնվել է 1922թ.-ին և բնակվում է Պլուաստիում: 1950թ.-ին թիվ 92/1950 Դեկրետի ուժով պետությունը պետականացրեց դիմումատուի՝ երկու սենյակից բաղկացած սեփական տունը, ավտոտնակը և հարակից հողամասը, որը նա 1944թ.-ին որպես օժիտ ստացել էր իր հորից:

Դիմումատուի կողմից իր սեփականության իրավունքների վերականգնման նպատակով ներկայացված առաջին հայցը բավարարվեց Պրահովայի շրջանային դատարանի կողմից: Սակայն այս դատարանի վճիռը 1995թ հունիսի 13-ին բեկանվեց Պլուաստիի Վերաքննիչ դատարանի կողմից այն հիմքով, որ դատական ատյանները իրավասու չէին քննել Պետականացման մասին Դեկրետի վերաբերյալ դիմումը: 1996թ. մարտին դիմումատուն թիվ 112/1995 Օրենքի հիման վրա պետականացված սեփականության դիմաց հատուցման պահանջ է ներկայացնում: Վարչական խորհուրդը նրան վերադարձնում է բնակարանը, որը դիմումատուն զբաղեցնում էր որպես վարձակալ և տրամադրում է վնասների հատուցում տան մնացած մասի և հողամասի համար, սակայն մերժում է դիմումատուի պահանջը՝ ավտոտնակի մասով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուի ստացած հատուցումը ցածր էր գույքի արժեքից, վերջինս հայց է ներկայացնում Պլուաստիի Առաջին ատյանի դատարան, որի քննությունը, սակայն, հետաձգվում է, քանի որ միևնույն ժամանակ ներկայացվել էի նաև սեփականության իրավունքի վերականգնման պահանջ: Այդ պահանջը Պլուաստիի Վերաքննիչ դատարանը 1998թ. մարտի 30-ին մերժում է, այն հիմքով, որ դիմումատուի կողմից պետականացված սեփականության դիմաց հատուցման պահանջի ներկայացումը նշանակում է, որ վերջինս ընդունում է, թե սեփականության պետականացումը օրինական է եղել: Պետականացված սեփականության դիմաց հատուցման պահանջի դիմումի վերաբերյալ Վարչական խորհրդի որոշումը ուժի մեջ մնաց:

Վկայակոչելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, դիմումատուն բողոքում է, որ Վերաքննիչ դատարանի վճռի դեմ, որով նա մերժել է -ճանաչել, որ դատարաններն իրավասու են քննել պետականացված սեփականության դիմաց հատուցման հետ կապված պահանջները:

Բացի այդ, հիմնվելով Թիվ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի վրա դիմումատուն բողոքում էր Վերաքննիչ Դատարանի վճիռների դեմ առ այն, որ դրանք խախտել են իր սեփականությունը անարգել տնօրինելու իր իրավունքը:

Մեծ պալատի վճիռը.

6-րդ հոդվածի 1-ին կետ.

Պալատը գտավ, որ Վերաքննիչ դատարանի 1995թ. հունիսի 13-ի վճռի բեկանումը ինքնին խախտել է նրա դատարանի դիմելու իրավունքը: Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1998 թ. մարտի 30-ին Վերաքննիչ դատարանը վճիռ էր կայացրել հատուցման պահանջի դիմումը մերժելու վերաբերյալ, այն հիմնավորմամբ, որ միևնույն ժամանակ վիճարկվող գույքի կապակայանք վարույթում առկա էր մեկ այլ բողոք, դատարանը այդպիսով խախտել էր դիմումատուի իրավունքը դատարանի մատչելիության առումով: Չետևաբար, Մեծ պալատը միաձայն վճռեց, որ վերոնշյալ 2 հիմքով խախտվել է 6-րդ հոդվածի 1-ին կետը:

Առաջին Արձանագրության հոդված 1-ին.

Մեծ պալատը նշում է, որ դիմումատուն իր սեփականության իրավունքի խախտման հետևանքով կարող է հավակնել տուժողի կարգավիճակի, միայն նրան չհատուցված վիճարկվող գույքի մասով: Դատարանն առաջին հերթին հիշեցնում է, որ նա իրավասու չէ ուսումնասիրել պետականացման այն գործընթացի հանգամանքները կամ շարունակական հետևանքները, որոնք տեղի են ունեցել նախքան Ռումինիայի նկատմամբ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, այն է՝ 1994թ հունիսի 20-ը: Բացի դրանից, դատարանը նշում է, որ դիմումատուի կողմից հարուցված վարույթները կապ չեն ունեցել «առկա գույքի» հետ և նաև դիմումատուն չի ապացուցել, որ նա «իրավաչափ ակնկալիքներ» ուներ գույքի այն մասի համար հատուցում ստանալու կապակցությամբ, որի մասով նրա բերած բողոքները չեն բավարարվել ներպետական դատարաններում: Չետևաբար, Մեծ պալատը միաձայն վճռեց, որ Առաջին Արձանագրության 1-ին հոդվածը չի խախտվել:

(2) Popovici and Dumitrescu v.Romania (Պոպովիչին և Դյումիտրեսունը նկատման Ռումինիայի), no 31549/96

Իրինա Մարգարետա Պոպովիչին, Սանդրա Պոպովիչին և Մարիա Մարգարետա Դյումիտրեսկուն Ռումինիայի քաղաքացիներ են: Առաջին երկու դիմումատուները ծնվել են համապատասխանաբար 1930 և 1932 թվականներին:

Տիկին Դյումիտրեսկուն վախճանվել է 1997թ, սակայն գործի քննությունը դատարանում շարունակվել է նրա ժառանգի՝ Ֆրանսիայի և Ռումինիայի

քաղաքացի հանդիսացող, Մարիա Քրիստինա Մոկ Դումիտրեսկուի կողմից, որը բնակվում է Վիլլեբոն քաղաքում (Ֆրանսիա): Դիմումը վերաբերում էր դիմումատուների հոր կողմից Պրեդիալ քաղաքում գտնվող շինությանը: 1965թ այդ շինությունը պետականացվել է և 1992թ փոխանցվել է Ռումինիայի հետախուզական ծառայության տնօրինությանը:

Դիմումատուները բողոքում էին ներպետական դատարանների այն որոշումների դեմ, որոնցով մերժվել է վերադարձնել պետության կողմից պետականացված իրենց նախկին սեփականությունը: Վկայակոչելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, դիմումատուները բողոքում էին դատական այն որոշումների դեմ, որոնցով մերժվել է ճանաչել սեփականության իրավունքի որոշմանը վերաբերող հարցերը քննելու դատարանների իրավասությունը: Առաջին Արձանագրության 1-ին հոդվածի հիմքով դիմումատուները բողոքում էին նաև իրենց սեփականությունը անարգել տնօրինելու իրավունքի խախտման մասին:

Մեծ պալատի վճիռը

6-րդ հոդվածի 1-ին կետ.

Եզրակացնելով, որ սեփականության իրավունքի որոշման հետ կապված հարցերը քննելու դատարանի իրավասության ճանաչումը մերժելն ինքնին խախտում է արդարադատության մատչելիության իրավունքը, Մեծ պալատը միաձայն վճռեց, որ խախտվել է 6-րդ հոդվածի 1-ին կետը:

Թիվ 1-ին արձանագրության հոդված 1-ին: Մեծ պալատը նշում է, որ գործի քննությունը չի առնչվում այդ պահին «առկա գույքին» և դիմումատուները չեն հիմնավորել, որ ունեն «իրավաչափ ակնկալիքներ» ստանալ պահանջվող գույքը: Մեծ պալատը գտավ, որ դիմումատուները չէին հանդիսանում գույքի սեփականատերեր և միաձայն վճռեց, որ Թիվ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը չի խախտվել:

(3) Lindner and Hammermayer v. Romania (Լինդներն ու Համերմայերը ընդդեմ Ռումինիայի), no 35671/97

Ալեքսանդրու Լինդները և Քրիստինա Համերմայերը հանդիսանում են Ռումինիայի քաղաքացիներ և բնակվում են Ֆրանկֆուրտ քաղաքում (Գերմանիա): Նրանք որպես իրենց մոր սեփականության ժառանգներ, հայց ներկայացրեցին իրենց մոր կողմից 1939 թվականին Բուխարեստում ձեռք բերված և 1975 թվականի թիվ 223/1974 Դեկրետի հիման վրա Պետության կողմից բռնագանձված երեք բնակարանից կազմված գույքի, վերադարձման մասին: Բուխարեստի Առաջին ատյանի դատարանը բավարարեց նրանց հայցը, այն հիմքով, որ բռնագանձման մասին վարչական որոշումը անօրինական էր, քանի որ այդ մասին նրանց մայրը չէր տեղեկացվել: Սակայն քաղաքային էտրիդի կողմից բերված վերաքննիչ բողոքի հիման վրա Բուխարեստի Վերաքննիչ դատարանը մերժեց դիմումատուների հայցը, և վճռեց, որ նրանք պետականացված սեփականության դիմաց հատուցում ստանալու հարցում իրավունք ունեին հիմնվել միայն թիվ 112/1995 օրենքի դրույթների վրա:

Վկայակոչելով Չորրորդ Արձանագրության 2-րդ հոդվածը (տեղաշարժվելու ազատություն), դիմումատուները պնդում էին, որ բռնագրավման պատճառ է հանդիսացել իրենց մոր արտագաղթը Գերմանիա 1975 թվականին: Բացի դրանից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա դիմումատուները բողոքում էին Վերաքննիչ դատարանի որոշման դեմ, որով մերժվել էր ճանաչել սեփականության իրավունքի որոշմանը վերաբերող հարցերը քննելու դատարանների իրավասությունը: Վկայակոչելով Առաջին Արձանագրության 1-ին հոդվածը, Դիմումատուները բողոքում էին նաև այն կապակցությամբ, որ Վերաքննիչ դատարանի վճիռը միջամտել էր իրենց՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի իրականացմանը:

Մեծ պալատի վճիռը.

Քանի որ Ռումինիան Կոնվենցիան վավերացրել է 1994թ.-ին, իսկ Չորրորդ Արձանագրության 2-րդ հոդվածի հիման վրա դիմումատուների ներկայացրած գանգատը վերաբերում էր իրենց մոր տեղաշարժի ազատության 1975 թվականին տեղի ունեցած ենթադրյալ խախտմանը, դատարանն իրավասու չէր քննել այդ գանգատը: Այդ իսկ պատճառով դատարանը այն հայտարարեց անընդունելի:

6-րդ հոդվածի 1-ին կետ.

Մեծ պալատը ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանը չի ուսումնասիրել դիմումատուների ներկայացված փաստարկներից և ոչ մեկը և նրանց առաջարկել է դիմել Վարչական Խուրհուրդ՝ լուծելու վերջիններիս կողմից ներկայացված հատուցման պահանջը: Այն փաստը, որ Վերաքննիչ դատարանը գտավ, որ գույքի բռնագանձումը կիրառվել է «օրենքի հիման վրա» հիմք չի տալիս եզրակացնելու, որ դատարանն ուսումնասիրել է բռնագանձման հրամանի օրինականությունը: Յետևաբար, վերաքննիչ դատարանն իր վճռով թույլ չի տվել դիմումատուներին դատարաններում վարույթներ հարուցել իրենց սեփականության իրավունքների վերականգման վերաբերյալ ի խախտումն 6-րդ հոդվածի 1-ին կետի:

Առաջին Արձանագրության 1-ին հոդվածը.

Ինչ վերաբերվում է սեփականության իրավունքի խախտման վերաբերյալ բերած բողոքին, Մեծ պալատը եզրակացրեց, որ դատարանը իրավասու չէ քննելու բռնագանձման հանգամանքներն ու դրանց շարունակական ազդեցությունը՝ Ռումինիայի նկատմամբ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ամսաթվի նկատառումներով: Այնուհետև, Մեծ պալատը նշեց, որ դիմումատուների հարուցած վարույթները չեն վերաբերում «առկա գույքի» հետ և նաև դիմումատուները չեն ապացուցել, որ «իրավաչափ ակնկալիքներ» ունեին գույքի այդ մասի համար հատուցում ստանալու կապակցությամբ: Յետևաբար Մեծ պալատը վճռեց որ Առաջին Արձանագրության 1-ին հոդվածի խախտումն առկա չէ:

**(4) Cumpăna and Mazare v. Romania (Կունպանան և Մազառեն ընդդեմ
Ռումինիայի), no33348/96**

Կոնստանտին Կունպանան և Ռադու Մազառեն ռումինական լրագրողներ են, որոնք համապատասխանաբար ծնվել են 1951 և 1968 թվականներին և բնակվում են Կոնստանտայում: 1994թ ապրիլին դիմումատուները «Տելեգրաֆ» թերթում, որի գլխավոր խմբագիրն է Մ. Մազառեն, հոդված են տպագրում, որը կասկածի տակ է դնում մի պայմանագրի օրինականությունը, որի համաձայն Կոնստանտայի Քաղաքային խորհուրդը հանձնարարել է «Վինալեքս» կազմակերպությանն իրականացնել սխալ կանգառված ավտոմեքենաների հեռացումը: Հոդվածը, որը լույս էր տեսել հետևյալ խորագրով. «Նախկին փոխքաղաքապետ Դ.Մ.-ն և գործող դատավոր Ռ.Մ.-ն կատարել են մի շարք հանցագործություններ Վինալեքսի սխեմայում», ի թիվս այլ բաների, ուղեկցվել էր մի ծաղրանկարով, որտեղ պատկերված էր եղել դատավորը (տիկին Մոգան) նախկին փոխքաղաքապետի թևի վրա թղթադրամներով լի պայուսակ քարշ տալիս: Տիկին Մոգան, որը քաղաքային խորհրդի անունից ստորագրել էր պայմանագիրը Վինալեքսի հետ, դատի է տալիս դիմումատուներին: Նա պնդում է, որ ծաղրանկարը ակնարկ է պարունակում առ այն, որ ինքը և փոխքաղաքապետը, որոնք երկուսն էլ ամուսնացած են, ինտիմ հարաբերությունների մեջ են գտնվում: 1995 թվականի մայիսի 17-ին դիմումատուներին մեղավոր են ճանաչվում վիրավորանքներ հասցնելու և զրպարտության մեջ և դատապարտվում 7 ամիս ազատազրկման: Միաժամանակ նրանց արգելվում են ազատազրկումից հետո մեկ տարի զբաղվել լրագրողական գործունեությամբ: Նրանց նկատմամբ կայացված վճիռն բողոքարկման արդյունքում մնում է անփոփոխ:

Հանրային դատախազությունը դիմում է ներկայացնում՝ պահանջելով ի կատար չածել 1995 թվականի մայիսի 17-ի որոշումը: Արդարադատության գերագույն դատարանը մերժում է դիմումը՝ հիմնավորելով, որ հոդվածը զրպարտություն էր պարունակում և որ ծաղրանկարի հրատարակումը, որը Տիկին Մոգայի պատվի և հեղինակության համար կործանարար կարող էր լինել, համարվում է վիրավորանքի հասցնում:

1996թ. նոյեմբերի 22-ին Ռումինիայի նախագահը հայցվորներին ներում շնորհեց վերջիններիս ազատելով ազատազրկումը կրելուց: Մ.Մոցառեն շարունակեց «Տելեգրաֆ» թերթում աշխատել որպես գլխավոր խմբագիր, մինչդեռ Մ. Կունպանան աշխատանքային հաստիքների կրճատման հետևանքով 1997թ հեռացավ թերթից: Դիմումատուները, վկայակոչելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածը բողոքում էին, որ վիճարկվող հոդվածի հրատարակման համար իրենց նկատմամբ ներկայացված մեղադրանքն ու ազատազրկումը խախտել է արտահայտվելու ազատության իրենց իրավունքը:

Մեծ պալատի վճիռը.

10-րդ հոդված.

Մեծ պալատը առաջին հերթին նշում է, որ դիմումատուները դատապարտվել էին զրպարտության համար, որպես արդյունք այն հայտարարությունների, որ տիկին Մոգան օրենքը չի իմացել և կաշառք է

վերցրել: Անժխտելի է, որ դիմումատուների դատապարտումը հանդիսացել է նրանց արտահայտվելու ազատության իրավունքի միջամտություն, և որ այդ միջամտությունը նախատեսված է եղել Ռումինիայի քրեական օրենսգրքի նորմերով:

Ինչպես և ներպետական դատարանները, Մեծ պալատն ընդունում է, որ վիճարկվող հոդվածը վնասում է տիկին Մոգայի հեղինակությանը և միանշանակ, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցի կապակցությամբ հասարակական քննարկումների տեղի չի տվել: Բացի այդ, ներկայացվել են ծաղրանկարի հրատարակման համար պատիժը հիմնավորող համապատասխան հիմքեր, մասնավորապես տիկին Մոգայի բարի համբավի պաշտպանությունը և արդարադատության հեղինակության պահպանությունը: Ծաղրանկարը միջամտում էր տիկին Մոգայի անձնական և ընտանեկան կյանքին և անցնում էր թույլատրելի քննադատության սահմանները: Իսկ ինչ վերաբերվում է դիմումատուների նկատմամբ կիրառված սանկցիային, Մեծ պալատը ընդունում է, որ այն իրոք խիստ էր, սակայն դիմումատուները, ներում չնորհվելու արդյունքում, չեն կրել ազատազրկման ձևով նշանակված պատիժը: Բացի այդ, չնայած որ դիմումատուներին արգելվել է զբաղվել լրագրողական գործունեությամբ, գործնականում դա կոնկրետ ազդեցություն չի ունեցել նրանց մասնագիտական գործունեությունը շարունակելու վրա:

Վերը նշված հանգամանքներում Մեծ պալատը գտնում է, որ դիմումատուների արտահայտվելու ազատության իրավունքի միջամտությունը համաչափ էր հետապնդվող իրավաչափ նպատակներին, այն է՝ այլ անձանց իրավունքների պաշտպանությունը և արդարադատության հեղինակության պահպանությունը: Այդ պատճառով Մեծ պալատը հինգ ձայնով ընդդեմ երկուսի վճռեց, որ 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

(5) Edward and Lewis v. the United Kingdom (Էդվարդն ու Լյուիսը ընդդեմ Միացյալ Թագավորության), nos. 39647/98 and 40461/98

Մարտին Ջոն Էդվարդսը և Մայքլ Լյուիսը երկուսն էլ հանդիսանում են Միացյալ Թագավորության քաղաքացիներ: Մ. Էդվարդսը ծնվել է 1946թ. և բնակվում է Վորքինգ քաղաքում (Սուրեյ): Մ. Լյուիսը ծնվել է 1953թ. և բնակվում է Թոնբրիջ քաղաքում (Քենթ): 1994թ. օգոստոսի 9-ին վերահսկողական և հետախուզական գործողությունների արդյունքում Մ. Էդվարդսը գաղտնի գործակալի ընկերակցությամբ ձերբակալվեց բանտարկյալներին տեղափոխող ավտոմեքենայում: Այդ ավտոմեքենայում հայտնաբերվեց ճամպուրկ, որում պարունակվում էր 4.83 կգ հերոյինի 50%-անոց խառնուրդ: 1995թ. ապրիլի 7-ին դիմումատուն մեղավոր ճանաչվեց վերավաճառելու նպատակով Ա կարգի թմրեցնող նյութեր պահելու համար և դատապարտվեց 9 տարի ազատազրկման: Նրա բերած վերաքննիչ բողոքն առանց բավարարման թողնվեց:

1995թ. հուլիսի 25-ին գարեջրատան կանգառում Մ. Լյուիսին ծառայողական համազգեստով երկու ոստիկաններ ձերբակալեցին այն բանից հետո, երբ նա երկու գաղտնի գործակալներին կեղծ թղթադրամներ էր ցույց տվել: Նրա բնակարանի խուզարկության ժամանակ ևս հայտնաբերվեցին կեղծ թղթադրամները: 1996թ. նոյեմբերի 12-ին նա իրեն մեղավոր ճանաչեց երեք

մեղադրանքներով՝ կեղծ փողերը հետագայում այլ թղթադրամներով փոխարինելու նպատակով պահելու համար: Հայցվորը դատապարտվեց չորս ու կես տարի ազատազրկման:

Երկու դեպքում էլ դատախազության կողմից գործի իրեղեն ապացույցները չհրապարակելու մասին ներկայացված միջնորդությունը բավարարվեց, հիմք ընդունելով, որ այդ ապացույցներն իրենց բնույթով չէին կարող օգնել պաշտպանությանը և որ առկա էր դրանց չհրապարակման իրական հասարակական պահանջ: Բացի այդ, դատավորը մերժեց գաղտնի գործակալների կողմից ձեռք բերված ապացույցները չօգտագործելու մասին միջնորդությունը:

Երկու դիմումատուները, հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա բողոքում էին, որ նրանք չեն օգտվել արդար դատաքննության իրենց իրավունքից, քանի որ գործակալները դրդել են նրանց հանցագործությունների կատարմանը և գործի քննությունը ներպետական ատյաններում՝ կապված ապացույցների չհրապարակման հետ, անարդարացի էր:

Մեծ պալատի վճիռը.

6-րդ հոդվածի 1-ին կետ.

Մեծ պալատը նշում է, որ դատարանի համար առաջնային է հանդիսանում այն ընթացակարգի ուսումնասիրությունը, որի ընթացքում հանցագործություն կատարելուն դրդելու վարկածի մասին կայացվել է որոշում գործերից յուրաքանչյուրի դեպքում, որպեսզի Դատարանը կարողանա ստուգել, արդյոք պաշտպանության կողմի իրավունքները պատշաճորեն պաշտպանվել են, թե ոչ: Տվյալ դեպքում չհրապարակված ապացույցները վերաբերում էին կամ կարող էին վերաբերել գործը ըստ էության քննող դատավորի կողմից լուծված փաստական հանգամանքներին (հատկապես այն հարցին, թե արդյոք դիմումատուներին իրականում դրդել էին քննության առարկա հանցագործությունների կատարմանը): Եթե պաշտպանության կողմը կարողանար հանդգնել դատավորին, որ ոստիկանության գործողություններն անհամապատասխան են եղել արարքին, ապա իրականում դատախազությունը պարտավոր կլիներ կարճել գործը: Այսպիսով, դատախազության միջնորդությունը, կապված գործի որոշակի հանգամանքների չհրապարակման հետ, որոշիչ դեր դեր խաղաց դիմումատուների դատավարության ժամանակ: Բացի դրանից դիմումատուներին չեն տրամադրվել ապացույցները, ինչի հետևանքով նրանց փաստաբանները ի վիճակի չէին դատավորի առաջ ամբողջությամբ պաշտպանել հանցագործության կատարմանը դրդելու մասին վարկածը: Ավելին, այս նույն հիմքով պաշտպանության կողմի պատճառաբանությունները մերժած դատավորները արդեն ծանոթացել էին մեղադրանքը հիմնավորող ապացույցներին, որոնք կարող էին օգտակար լինել այդ գործով:

Նման պայմաններում, վարույթը, որը վերաբերում էր ապացուցման միջոցների չհրապարակման և հանցագործությունների կատարմանը դրդելու հարցերի քննությանը, չի համապատասխանել մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքներին, ինչպես նաև չի տրամադրել բավարար

երաշխիքներ մեղադրյալներին իրենց իրավունքների պաշտպանության համար: Պալատը միաձայն որոշեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

(6) Kopecky' v. Slovakia (Կոպեչկին ընդդեմ Սլովակիայի), no. 44912/98

Ժուրաժ Կոպեչկին Սլովակիայի քաղաքացի է: 1959թ. փետրվարի 12-ին նրա հայրը տուգանվել է և դատապարտվել մեկ տարի ազատազրկման 131 հատ ոսկե մետաղադրամներ և 2,151 հատ նումիզմատիկ արժեք ունեցող արծաթե մետաղադրամներ պահելու համար: Մետաղադրամները նաև բռնագանձվեցին: 1992թ. ապրիլի մեկին այդ դատավճիռը բեկանվեց և 1992թ. սեպտեմբերի 30-ին դիմումատուին պահանջեց հետ վերադարձնել իրեն հորը պատկանող մետաղադրամները՝ հիմք ընդունելով 1991թ. Գույքային իրավունքների վերականգման մասին ակտը: 1995թ. սեպտեմբերի 19-ին Սենիկայի շրջանային դատարանը դիմումատուին մետաղադրամները վերադարձնել մասին հրահանգ ներկայացրեց Ներքին գործերի նախարարությանը: Սակայն, Ներքին գործերի նախարարությանը բողոքարկեց այն, հիմնավորելով, որ բոլոր համապատասխան փաստաթղթերը ոչնչացվել են, և որ մետաղադրամների գտնվելու վայրի հետ կապված ապացույցներ ներկայացնելը հանդիսանում է դիմումատուի պարտականությունը: 1997թ. հունվարի 29-ին Բրատիսլավայի մարզային դատարանը (Krajsky' su'd) մերժեց դիմումատուի հայցը, հիմնվելով այն փաստի վրա, որ դիմումատուին չի ապացուցել, թե որտեղ են գտնվել մետաղադրամները 1991թ. ապրիլի մեկին՝ օրենքի ուժի մեջ մտնելու ժամանակ: Դիմումատուի, բերած վերաքննիչ բողոքը նույնպես առանց բավարարման թողնվեց:

Դիմումատուին մասնավորապես պնդում էր, որ մետաղադրամի վերադարձման նրա պահանջի մերժումը խախտել է Կոնվենցիայի թիվ 1-ին արձանագրության 1-ին հոդվածը:

Մեծ պալատի վճիռը.

Առաջին Արձանագրության հոդված 1-ին. Մեծ պալատը հատկապես կարևորում է այն փաստը, որ դիմումատուի կողմից ներկայացված ապացույցները պարունակում էին մետաղադրամների մանրամասն գույքագրումը, ինչպես նաև պաշտոնական զեկույց, որը մատնանշում էր Ներքին գործերի նախարարություն մետաղադրամները փոխանցվելու տարեթիվը, վերջինս սակայն չտրամադրեց ոչ մի հավաստի բացատրություն առ այն՝ թե ինչու մետաղադրամները այլևս չեն գտնվում նրա տիրապետության ներքո:

Պետական իշխանությունների մեղքով առաջացած պատճառներով, դիմումատուին ի վիճակի չէր իմանալու, թե ինչ է տեղի ունեցել մետաղադրամների հետ դրանք Ներքին գործերի նախարարություն հանձնելուց հետո: Որպես հետևանք, դիմումատուին հնարավորություն չունեցավ իրականացնել իրեն վերապահված պարտականությունը և ցույց տալ օրենքի ուժի մեջ մտնելու պահին մետաղադրամների գտնվելու վայրը: Հաշվի առնելով, որ դիմումատուի վրա դրված պարտականությունը չափից

ծանր էր, Մեծ պալատը չորս ձայնով ընդդեմ երեքի եզրակացրեց, որ տեղի է ունցել Առաջին Արձանագրության 1-ին հոդվածի խաախտում:

(7) Ocalan v. Turkey (Օջալանն ընդդեմ Թուրքիայի), no. 46221/99

Թուրքիայի քաղաքացի Աբդուլահ Օջալանը ծնվել է 1949 թվականին: Նա հանդիսանում է Քուրդիստանի աշխատավորների կուսակցության (ՊԿԿ) նախկին ղեկավար և ներկայումս բանտարկված է Իմրալիի բանտում (Բուրսա, Թուրքիա): Գործի իրադարձությունների ծավալման ժամանակ Թուրքիայի դատարանները Օջալանին ձերբակալելու մասին յոթ որոշում են կայացրել, իսկ միջազգային ոստիկանությունը (ԻնտերՊոլը) շրջանառության մեջ էր դրել վերջինիս հետախուզման մասին ծանուցումը (կարմիր ծանուցում): Դիմումատուն մեղադրվում էր Թուրքական պետության տարածքային ամբողջականության և կյանքի դեմ ուղղված ահաբեկչական գործողությունների հրահրման նպատակով զինված խմբավորման ստեղծման մեջ:

1998թ հոկտեմբերի 9-ին, դիմումատուն արտաքսվում է Սիրիայից, որտեղ նա բնակվում էր երկար տարիներ: Այնտեղից նա գնում է Յունաստան, Ռուսաստան, Իտալիա, իսկ այնուհետև նորից՝ Ռուսաստան և Յունաստան, իսկ հետո Քենյա, որտեղ 1999 թ. փետրվարի 15-ի երեկոյան, կասկածելի հանգամանքներում, Նայրոբիի օդանավակայանում, ինքնաթիռի մեջ նրան ձերբակալում են Թուրքիայի պաշտոնատար անձինք: Նրան անմիջապես տեղափոխում են Թուրքիա: Դիմումատուի աչքերը գրեթե ողջ թռիչքի ընթացքում գտնվում էին կապված վիճակում: Թուրքիա ժամանելուն պես նրա գլխին կնգուղ են հագցնում և տեղափոխում Իմրալի բանտ, որտեղ նա ոստիկանական կալանքի տակ է պահվում 1999 թվականի փետրվարի 16-ից մինչև 23-ը և հարցաքննվում անվտանգության մարմինների կողմից: Այդ ժամանակահատվածում նա իրավաբանական օգնություն չի ստանում և փոխարենն անում է մի քանի ինքնամեղադրական հայտարարություններ, որոնք հաստատում են նրան առաջադրված մեղադրանքը: Անվտանգության ուժերի աշխատակիցները Թուրքիայում խոչընդոտում էին դիմումատուի փաստաբանին հանդիպել վերջինիս հետ: 1999թ փետրվարի 23-ին տասնվեց այլ փաստաբանների նույնպես արգելվում է այցելել դիմումատուին: 1999թ փետրվարի 23-ին, դիմումատուն բերվեց Անկարայի Պետական անվտանգության գործերով դատարանի դատավորի առջև, որը որոշում կայացրեց նրան նախնական կալաքի ենթարկելու մասին:

Դիմումատուի և նրա փաստաբանների առաջին հանդիպման տևողությունը սահմանափակված էր քսան րոպեով և անցկացվում էր միևնույն սենյակում անվտանգության ուժերի աշխատակիցների և դատավորի ներկայությամբ: Դիմումատուի և իր փաստաբանի հետագա հանդիպումները տեղի էին ունենում անվտանգության ուժերի աշխատակիցների հսկողության ներքո: Առաջին երկու այցելություններից հետո Մ.Օջալանի և նրա փաստաբանների միջև շփումները սահմանափակվեցին շաբաթական երկու այցելություններով, որոնցից յուրաքանչյուրի տևողությունը մեկ ժամ էր: Բանտի ղեկավարությունը մերժեց դիմումատուի փաստաբանին իր պաշտպանյալին տրամադրել գործի մեջ ներառված փաստաթղթերի պատճեններ՝ բացառությամբ մեղադրական

եզրակացության: Միայն 1999թ հունիսի 2-ի դատական նիստից հետո է Ազգային անվտանգության դատարանը որոշում ընդունում թույլատրել դիմումատուին, երկու քարտուղարների հսկողության ներքո, ուսումնասիրել գործի նյութերը, ինչպես նաև փաստաբանին՝ իր պաշտպանյալին տրամադրել որոշ փաստաթղթերի պատճեններ:

1999թ ապրիլի 24-ին ներկայացված մեղադրական եզրակացության համաձայն Հանրապետության դատախազը Ազգային անվտանգության դատարանում դիմումատուին մեղադրանք առաջադրեց Թուրքիայի տարածքի մի մասի անջատմանն ուղղված գործողություններ կատարելու, ինչպես նաև այդ նպատակով զինված խմբավորում կազմավորելու և առաջնորդելու մեջ: Դատախազը դիմումատուի համար մահապատիժ պահանջեց հիմնվելով Թուրքիայի քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածի վրա: 1999թ հունիսի 29-ին դիմումատուն մեղավոր ճանաչվեց հիշատակված արարքը կատարելու մեջ, և դատապարտվեց մահապատիժ՝ համաձայն 125-րդ հոդվածի: Վճռաբեկ դատարանն անփոփոխ թողեց այս դատավճիռը:

1999թ նոյեմբերի 30-ին, Մարդու իրավունքների եվրոպական Դատարանը, հիմք ընդունելով Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնը (Ժամանակավոր միջոցառումներ), միջնորդեց Թուրքիայի իշխանություններին «Ձեռնարկել մահապատիժի կատար ածունը կասեցնելուն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի դատարանը կարողանա ապահովել դիմումատուի՝ Կոնվենցիայի հիման վրա ներկայացված գանգատների ընդունելիության և ըստ էության հարցերի արդյունավետ քննությունը»:

2001թ հոկտեմբերին Թուրքիայի Սահմանադրության 38-րդ հոդվածը փոփոխվեց, սահմանելով որ մահապատիժ չի կարող կիրառվել՝ բացառությամբ պատերազմի կամ պատերազմի վտանգ ստեղծող գործողությունների կամ ահաբեկչական գործողությունների ժամանակ: Հիմք ընդունելով 2002թ օգոստոսի 9-ի հրապարակված թիվ 4771 օրենքը, Թուրքիայի Խորհրդարանը խաղաղ ժամանակ մահապատիժ չկիրառելու մասին օրենք է ընդունում: 2002թ հոկտեմբերի 3-ին Անկարայի Պետական անվտանգության գործերով դատարանը փոխարինում է դիմումատուի նկատմամբ նշանակված մահապատիժը՝ ցմահ բանտարկությամբ: Ահաբեկչական հանցագործությունների համար դատապարտված անձանց նկատմամբ խաղաղ ժամանակ մահապատիժ չկիրառելու մասին դրույթն անօրինական ճանաչելու մասին գանգատը 2002 թվականի դեկտեմբերի 27-ին մերժվում է Սահմանադրական դատարանի կողմից: 2002թ. հոկտեմբերի 9-ին քրեական գործի մասնակից երկու Արհմիություններ բողոք ներկայացրեցին դիմումատուի նկատմամբ նշանակված մահապատիժը ցմահ բանտարկությամբ փոխարինելու դատավճռի դեմ: Այս վարույթները դեռ չարունակվում էին երբ Մեծ պալատը կայացրեց իր որոշումը:

Մեծ պալատի վճիռը.

5-րդ հոդվածի 4-րդ կետ.

Մեծ պալատը գտավ, որ չնայած 1997թ. ուժի մեջ մտած Թուրքիայի քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի փոփոխությունը հստակ սահմանում է կալանքի տակ պահելու յուրաքանչյուր որոշում

դատարանում բողոքարկելու հնարավորությունը, Կառավարությունը չի տրամադրել դատարանի որոշման ոչ մի օրինակ, որով դատարանը բեկանած լինի մեղադրյալի նկատմամբ կալանք կիրառելու մասին դատախազության ներկայացրած միջնորդությունը, մինչև կալանքի 4-րդ օրվա ավարտը, (կալանքի տակ պահելու օրենքով սահմանված առավելագույն ժամկետը, որը դատախազությունը կարող է միջնորդել կասկածյալների նկարտմամբ կիրառելու համար): Մեծ պալատը գտավ, սույն գործի հատուկ հանգամանքները՝ հատկապես դիմումատուի մեկուսացումը, և այն փաստը, որ ոստիկանությունը խոչընդոտել է դիմումատուի փաստաբանների գործունեությանը, անհնարին են դարձրել դիմումատուի համար իրավական պաշտպանության միջոցների արդյունավետ օգտագործումը: Մեծ պալատը գտավ, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

5-րդ հոդվածի 1-ին կետ.

Պալատը գտավ, որ դիմումատուի ձերբակալումը և կալանավորումը իրականացվել են թուրքիայի դատարանների կողմից կայացրած որոշումների պահանջներին համապատասխան, այն է՝ 5-րդ հոդվածի առաջին կետի (c) ենթակետի իմաստով «հանցանք կատարելու հիմնավոր կասկածանքի հիման վրա իրավասու մարմինների մոտ իրեն տանելու նպատակով»: Բացի դրանից, բոլոր ողջամիտ կասկածներից վեր չի հաստատվել, որ քննչական գործողությունը, որի մի մասն իրականացվել էր Թուրքիայի, իսկ մյուս մասը Քենյայի պաշտոնյաների կողմից, դիտարկվում է որպես Թուրքիայի կողմից Քենյայի ինքնիշխանության՝ հետևաբար և միջազգային իրավունքի, խախտում: Վերոնշյալից հետևում է, որ 1999թ փետրվարի 15-ին իրականացված դիմումատուի ձերբակալումը և կալանավորումը 5-րդ հոդվածի առաջին կետի իմաստով պետք է համարվեն «օրենքով նախատեսված կարգին» համապատասխան: Հետևաբար այդ կետի խախտում տեղի չի ունցել:

5-րդ հոդվածի 3-րդ կետ.

Պալատը հաստատում է, որ պրն. Օջալանը, մինչև դատարանի առաջ ներկայանալը, ընդհանուր առմամբ կալանքի տակ է գտնվել նվազագույնը յոթ օր: Դատարանը չի ընդունում, որ անհրաժեշտություն կար դիմումատուին այդքան ժամանակ պահել անազատության մեջ մինչև դատավորի առաջ նրա ներկայանալը: Հետևաբար, տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

6-րդ հոդված.

Արդյոք Անկարայի Պետական անվտանգության դատարանը, որը դատապարտել էր դիմումատուին, անկախ և անաչառ էր.

Դատարանն իր կողմից կայացած նախկին վճիռներում հաստատել է, որ պետական անվտանգության գործերով դատարանի զինվորական դատավորների կարգավիճակի որոշ առանձնահատկություններ կասկածների տեղիք են տալիս դատավորների անկախության և անկողմնակալության առումով: Պալատի տեսանկյունից վերջին պահին զինվորական դատավորի

փոխարինումը, չէր կարող վերացնել դատարանի կազմի թերությունը, ինչի արդյունքում Մեծ պալատը իր նախորդ գործերով վճիռներում վերոնշյալ մասով խախտում է արձանագրել: Բացի այդ, սույն գործի բացառիկ հանգամանքների պայմաններում, զինվորական դատավորի ներկայությունը կարող էր միայն կասկածներ առաջացնել մեղադրյալի մոտ՝ կապված դատարանի անկախության և անաչառության հետ: Մեծ պալատը վճռեց, որ դիմումատուին դատապարտած Անկարայի Պետական անվտանգության դատարանը, 6-րդ հոդվածի առաջին կետի իմաստով, չի եղել անկախ և անաչառ: Հետևաբար, նշված մասով տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Արդյոք արդար էր դատաքննությունը Պետական Անվտանգության գործերով դատարանում.

Պալատը հաստատեց, որ դիմումատուն՝ կալանքի տակ գտնվելու ընթացքում, հարցաքննվել է առանց իր փաստաբանների ներկայության, որ դիմումատուն չի կարողացել հաղորդակցվել նրանց հետ երրորդ անձանց հսկողությունից դուրս, որ դիմումատուն միայն դատաքննության շատ ուշ փուլում է հնարավորություն ունեցել անմիջականորեն ծանոթանալ գործի նյութերին: Ավելին, սահմանափակվել են ինչպես փաստաբանների այցելությունների թիվն այնպես էլ տևողությունը, և փաստաբաններին բավականին ուշ է հնարավորություն տրվել անձամբ պատշաճ կարգով ծանոթանալ գործի նյութերին: Այս բոլոր խոչընդոտների ամբողջությունն այնպիսի սահմանափակող ազդեցություն ունեցան պաշտպանության կողմի իրավունքների վրա, որ խախտվեց 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության սկզբունքը: Ուստի, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ կետի b) և c) ենթակետերի խախտում:

Ինչ վերաբերվում է Կոնվեցիայի 6-րդ հոդվածի հիման վրա բերված այլ զանգատներին, Մեծ պալատը գտավ, որ այն արդեն անդրադարձել է դիմումատուի հիմնական զանգատներին, որոնք ծագել էին ներպետական ատյաններում դիմումատուի նկատմամբ իրականացված վարույթների ընթացքում: Հետևաբար անհրաժեշտություն չի առաջանում քննության առնելու արդար դատաքննությանն առչնվող 6-րդ հոդվածի հիման վրա բերված այլ զանգատները:

2-րդ 3-րդ և 14-րդ հոդվածներ (մահապատիժ).
Նախնական հարց.

Կառավարության պնդմամբ՝ 2-րդ հոդվածի հիման վրա դիմումատուի ներկայացված զանգատները, պետք է անընդունելի հայտարարվեն, քանի որ Թուրքիայում մահապատիժ արդեն վերացված է: Մեծ պալատը գտավ, որ սույն գործով դիմումատուն դատապարտված էր մահապատիժի և ավելի քան երեք տարի մեկուսացված էր՝ սպասելով իր ճակատագրի որոշմանը: Մինչև վերջերս վտանգ կար, որ մահապատիժը կարող էր ի կատար ածվել: Բացի դրանից, դիմումատուի զանգատը վերաբերում էր ոչ միայն դատավճռի ի կատար ածման, այլև դրա կայացման հարցին: Այդ իսկ պատճառով, Մեծ պալատը

ավելի նպատակահարմար գտավ ըստ էության քննել մահապատժի առնչությամբ բարձրացված հարցերը: Մեծ պալատը հետևաբար չընդունեց կառավարության առարկությունները:

Գործի էությունը. Մահապատժի ի կատար ածման հիմքերը.

Մեծ պալատը գտավ, որ մահապատժի իարգործման վտանգն իրականում վերացել է: Չնայած վարույթները ընդդեմ նրա պատժի փոխարինման դեռ ընթացքի մեջ են, չի կարելի պնդել, որ առկա են լուրջ հիմքեր կարծելու, որ դիմումատու կարող է մահապատժի ենթարկվել: Տվյալ հանգամանքներում 2-րդ, 3-րդ և 14-րդ հոդվածների հիման վրա ներկայացված գանգատները՝ կապված մահապատժի իրագործման հետ, պետք է մերժվեն:

Մահապատժի նշանակելը.

Մահապատժի հարցի հետ կապված մնում է որոշել, թե արդյոք մահապատժի նշանակելն ինքնին հանգեցրել է Կոնվենցիայի խախտման:

I. 2-րդ Հոդված. Մեծ պալատը միանշանակ գտավ, որ ոչ մի առանձին հարց այս իմաստով չի ծագում 2-րդ հոդվածի վերաբերյալ և նախընտրեց այս հարցը քննության առնել 3-րդ հոդվածի հիման վրա:

II. 3-րդ հոդվածը՝ դիտարկված 2-րդ հոդվածի լույսի ներքո.

ա) Պետությունների, որպես պայմանագրի կողմերի, մահապատժի հետ կապված պրակտիկայի իրավական նշանակությունը.

Մեծ պալատը հիշեցնում է, որ Կոնվենցիան պետք է դիտարկվի իր ամբողջության մեջ, և որ 3-րդ հոդվածը պետք է ներդաշնակ կերպով մեկնաբանվի 2-րդ հոդվածի հետ: Եթե 2-րդ հոդվածը մեկնաբանվեր որպես մահապատժի թույլատրող՝ չնայած մահապատժի գրեթե համընդհանուր վերացմանը Եվրոպայում, հնարավոր չէր լինի հաստատել, որ 3-րդ հոդվածը նախատեսում է մահապատժի համընդհանուր արգելում, քանի որ 2-րդ հոդվածի 1-ին կետի հստակ ձևակերպումը այն կդարձներ առոչինչ: Հետևաբար, Մեծ պալատը նախ պետք է անդրադառնա դիմումատուի փաստարկներին, որը հաստատում է, որ Պայմանավորվող պետությունների փորձը կարող է կիրառվել վկայակոչելու համար նրանց համաձայնությունը՝ վերացնելու 2-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված բացառությունը, որը հստակորեն թույլատրում է որոշ հանգամանքերի առկայության պայմաններում մահապատժի կիրառումը:

Մեծ պալատի համար այս բնագավառում տեղի ունեցած զարգացումների հիման վրա ներկայումս չի կարելի բացառվել, որ պետությունները՝ ելնելով իրենց փորձից, համաձայնվել են փոփոխել 2-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ նախադասությունը, որով թույլատրվում է մահապատժի կիրառումը խաղաղ պայմաններում: Այս կապակցությամբ կարելի է առարկել նաև, որ մահապատժի կիրառումը կարող է դիտարկվել որպես անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք՝ ի խախտումն 3-րդ հոդվածի: Ինչևէ, անհրաժեշտություն չկա, որպեսզի Մեծ պալատը այս հարցի շուրջ հանգի վերջնական հաստատուն եզրակացության,

քանի որ անարդար դատաքննության արդյունքում մահապատիժն իրագործելը կհակասի Կոնվենցիային, նույնիսկ եթե վերջինիս 2-րդ հոդվածը անհրաժեշտ լինի մեկնաբանել որպես ներկայումս մահապատիժը թուլատրող:

բ) Անարդար դատաքննություն և մահապատիժ.

Եթե նույնիսկ մահապատիժը, 2-րդ հոդվածի համաձայն, մինչ օրս մնար թուլատրելի, մահապատիժի հիման վրա անձին կամայականորեն կյանքից զրկելն արգելվում է: Սա բխում է այն պահանջից, որ «յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով»: Կամայական ակտը, Կոնվենցիայի իմաստով, չի կարող դիտարկվել օրինական: 2-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներից նույնպես հետևում է, որ կյանքից կարելի է զրկել միայն «ի կատարումն դատարանի վճռի» և որ «դատարանը», որը նշանակում է այդ պատիժը, մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի իմաստով, պետք է լինի անկախ և անաչառ: Բացի դրանից, արդարադատության ամենախիստ ստանդարտների պահանջները պետք է պահպանվեն քրեական վարույթների ընթացքում` ինչպես առաջին այնպես էլ վերաքննիչ ատյաններում: Քանի որ, մահապատիժի իրականացումը անվերականգնելի է, միայն վերոհիշյալ նորմերի կիրառումը հնարավորություն կտա բացառել, որպեսզի անձը կամայական և անօրինական ձևով զրկվի կյանքից:

Այսպիսով, Մեծ պալատը պետք է ուսումնասիրի այս խնդրի էությունը 3-րդ հոդվածի լույսի ներքո` կապված մահապատիժի նշանակման հետ: Մեծ պալատի տեսանկյունից անարդար դատաքննության արդյունքում ցանկացած անձի նկատմամբ մահապատիժ նշանակելը հավասարազոր է այդ անձի մեջ անարդարացիորեն վախ սերմանելուն առ այն, որ ինքը մահապատիժ կենթարկվի: Մահապատիժի նշանակման հետևանքով առաջացած վախը և անվստահությունը այնպիսի հանգամանքներում, երբ առկա է իրական հնարավորություն, որ մահապատիժը ի կատար կածվի, ինչպես որ տվյալ գործում էր, հաշվի առնելով դիմումատուի հեղինակությունը և այն փաստը, որ նա դատապարտվել էր առանձնապես ծանր հանցագործությունների կատարման համար, պետք է որ շահագրգիռ անձի մոտ մարդկային զգալի տառապանք առաջացներ: Այդ տառապանքը չի կարող առանձնացվել դատաքննության անարդարությունից, որը պատժի հիմքն է հանդիսանում: Հաշվի առնելով Պայմանավորող կողմերի կողմից մահապատիժի մերժումը, որը այլևս տեղ չունի ժողովրդավարական հասարակությունում, նման հանգամանքներում մահապատիժի դատապարտման յուրաքանչյուր դեպք ինքնին պետք է դիտարկվի որպես անմարդկային վերաբերմունքի դրսևորում: Դիմումատուի նկատմամբ անարդար դատաքննության արդյունքում նշանակված մահապատիժը այդ իսկ նկատառումներով առաջացրել է անմարդկային վերաբերմունք` ի խախտումն 3-րդ հոդվածի:

Հոդված 3.

Քենիայից Թուրքիա Դիմումատուի տեղափոխման պայմանները.

Մեծ պալատը գտնում է, որ «բոլոր ողջամիտ կասկածներից վեր» չի հաստատվել, որ դիմումատուի ձերբակալումը, ինչպես նաև Կենյայից Թուրքիա նրա տեղափոխման պայմանները գերազանցել են յուրաքանչյուր ձերբակալմանն ու կալանավորմանը սովորաբար հատուկ նվաստացման աստիճանը կամ հասել են խստության նվազագույն աստիճանին որի դեպքում կիրառվում է 3-րդ հոդվածը: Հետևաբար բացակայում է այս կապակցությամբ նշված մասով խախտում տեղի չի ունեցել:

Կալանավորման պայմանները Իմրալիի կղզում.

Մեծ պալատը գտավ, որ դիմումատուի Իմրալիի բանտում կալանքի տակ գտնվելու ընդհանուր պայմանները չեն հասել խստության նվազագույն սահմանին, որն անհրաժեշտ է 3-րդ հոդվածի իմաստով, հաստատվելու անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի առկայությունը: Հետևաբար այս մասով այդ դրույթի խախտում տեղի չի ունեցել:

Հոդված 34.

Դիմումատուն հայտարարում է , որ նրան թույլ չեն տվել իրականացնել իր անհատական գանգատի իրավունքը՝ այն առումով, որ Ամստերդամում նրա օրինական ներկայացուցիչներին արգելվել է իրեն ձերբակալելուց հետո հաղորդակցվել իր հետ, իսկ մյուս դեպքում, կառավարությունը չի պատասխանել տեղեկություններ տրամադրելու մասին Դատարանի պահանջին: Դիմումատուն պնդում էր, որ խախտվել է Կոնվենցիայի 34-րդ հոդվածը: Ինչ վերաբերվում է ձերբակալումից հետո Ամստերդամում դիմումատուի և նրա փաստաբանների միջև հաղորդակցման հնարավորության բացակայությանը, ապա դա չի վկայում, որ շահագրգիռ անձի անհատական գանգատի իրականացման իրավունքը նշանակալի չափով խոչընդոտվել էր: Բացի դրանից, Մեծ պալատը գտավ, որ առանց խոչընդոտելու 39-րդ կանոնի հիման վրա սահմանված ժամանակավոր միջոցառումների պարտադիր բնույթ ունենալու կապակցությամբ իր արտահայտած տեսակետին, սույն գործի առանձնահատուկ հանգամանքներում, Թուրքիայի կառավարության՝ որոշ տեղեկություններ տրամադրել մերժելը չէր հանգեցրել դիմումատուի անհատական գանգատի իրավունքի խախտմանը:

(8) Mamatkulov and Abdurasulovic v. Turkey (Մամատկուլով և Աբդուրասուլովիչն ընդդեմ Թուրքիայի), nos 46827/99 and 46951/99

Գործը վերաբերում է երկու գանգատների, որոնք ներկայացվել են ազգությամբ ուզբեկ երկու քաղաքացիների՝ Ռուստամ Մամատկուլովի և Ասկարով Աբդուրասուլովիչի կողմից, ովքեր ծնվել են համապատասխանաբար 1959 և 1971 թվականներին: Նրանք հանդիսանում են ԵՐԿ կուսակցության անդամներ (Ռժգբեկստանի ընդդիմադիր կուսակցություն): 1999թ մարտի 27-ին

նրանք Թուրքիայից էքստրադիցիայի են ենթարկվել և հանձնվել են Ուզբեկստանի Հանրապետությանը, որտեղ ներկայումս գտնվում են կալանքի տակ:

Մամատկուլուվի գործը.

1999թ մարտի 3-ին Մամատկուլուվը Ալմա-Աթայից (Ղազախստան) տուրիստական վիզայով ժամանում է Ստամբուլ: Թուրքական ոստիկանությունը նրան ձերբակալում է Աթաթուրքի անվան (Ստամբուլ) օդանավակայանում և տանում ոստիկանության կալանավայր: Նա կասկածվում էր մարդասպանության, Ուզբեկստանում ռումբի պայթյունի հետևանքով այլ անձանց վնասվածքներ պատճառելու, ինչպես նաև Հանրապետության Նախագահի վրա ահաբեկչական հարձակման փորձի մեջ: Վկայակոչելով Թուրքիայի հետ կնքված երկկողմ պայմանագիրը՝ Ուզբեկստանի Հանրապետությունը պահանջում էր իրեն հանձնել դիմումատուին: 1999թ մարտի 11-ին դիմումատուն հարցաքննվեց Բակիրկոյի քրեական գործերով դատարանի դատավորի կողմից: Նույն օրը արագացված դատաքննություն է կիրառվում, որի արդյունքում կայացված որոշումը նշում է դիմումատուի դեմ ներկայացված մեղադրանքի հիմքերը և հաստատում, որ կատարված հանցագործությունները իրենց բնույթով ո՛չ քաղաքական են ո՛չ էլ զինվորական, այլ սովորական հանցանք են: Բացի դրանից, դատավորը որոշում է կայացնում դիմումատուին կալանավորելու մասին՝ մինչև նրան էքստրադիցիայի ենթարկելը:

Աբդուրասուլուվիչի գործը.

1998թ դեկտեմբերի 13-ին Աբդուրասուլուվիչը կեղծ անձնագրով մուտք է գործում Թուրքիա:

Հիմք ընդունելով Ուզբեկստանի Հանրապետության կողմից էքստրադիցիայի մասին ներկայացված պահանջը՝ թուրքական ոստիկանությունը 1999թ մարտի 5-ին ձերբակալեց Աբդուրասուլուվիչին և տարավ ոստիկանության կալանավայր: Դիմումատուն կասկածվում էր մարդասպանության, Ուզբեկստանի Հանրապետությունում ռումբ պայթեցնելու միջոցով այլ անձանց վնասվածքներ պատճառելու և Ուզբեկստանի Հանրապետության նախագահի նկատմամբ ահաբեկչական հարձակման փորձի մեջ: 1999թ մարտի 7-ին դիմումատուն տարվեց դատավորի մոտ, որը որոշում կայացրեց նրան կալանավորելու մասին: 1999թ մարտի 15-ի որոշմամբ Ֆաթիհի (Ստամբուլ) քրեական գործերով դատարանը, հիմք ընդունելով Թուրքիայի քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածը, որոշում կայացրեց դիմումատուի ազգության և հանցագործության բնույթի մասին: Քրեական գործերով զբաղվող դատարանը հաստատում է, որ հանցագործությունները, որոնց կատարման մեջ մեղադրվում է դիմումատուն իրենց բնույթով ո՛չ քաղաքական են ո՛չ էլ զինվորական, այլ սովորական հանցանք են հանդիսանում: Բացի այդ, դատավորը որոշում է կայացնում դիմումատուի կալանավորման մասին՝ նախքան նրան էքստրադիցիայի ենթարկելը:

1999թ մարտի 18-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հիմք ընդունելով Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնը (Ժամանակավոր միջոցառումներ), միջնորդում է Թուրքիայի կառավարությանը առ այն, որ

ելնելով կողմերի շահերից և դատական վարույթների բնականոն իրականացման անհրաժեշտությունից, ցանկալի կլիներ դիմումատուներին չհանձնել Ուզբեկստանի Հանրապետությանը՝ մինչև Դատարանին հնարավորություն կընձեռվեր իր մարտի 23-ի նիստում առավել հանգամանալից քննության առնել տվյալ գործը: 1999թ մարտի 19-ին Թուրքիայի Նախարարների խորհուրդը հրամանագիր է ստորագրում դիմումատուներին էքստրադիցիայի ենթարկելու մասին: 1999թ մարտի 23-ին Դատարանը որոշում է կայացնում երկարացնել ժամանակավոր միջոցառումների ձեռնարկման ժամկետը՝ մինչև առաջիկա ծանուցման տրամադրումը:

Մեծ պալատի վճիռը.

2-րդ և 3-րդ հոդվածներ.

Պալատը գտավ, որ ներկայացված գանգատը պետք է ուսումնասիրվի 3-րդ հոդվածի հիման վրա: Մեծ պալատը հիշեցնում է, որ որպես պայմանագրի կողմեր՝ պետություններն, իրավունք ունեն հսկել իրենց տարածքում օտարերկրացիների մուտքը, գտնվելը և մեկնումը: Բացի դրանից, ո՛չ Կոնվենցիան և ո՛չ էլ նրա Արձանագրությունները չեն նախատեսում քաղաքական ապաստանի իրավունք: Այնուամենայնիվ, պետությունը կարող է պատասխանատվություն կրել, եթե առկա են լուրջ և ապացուցված հիմքեր կարծելու, որ կա իրական վտանգ, որ էքստրադիցիայի ենթարկվելու դեպքում անձը կենթարկվի 3-րդ հոդվածով արգելվող վերաբերմունքի:

Պալատը նշում է, որ դիմումատուի ներկայացուցիչներն իրենց փաստարկների հիմնավորման համար, հատկապես, վկայակոչում էին մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում աշխատող միջազգային հետաքննության մարմինների զեկույցները, որոնք տեղեկություններ են պարունակում ընդդիմության հետևորդների խոշտանգումների և նրանց նկատմամբ այլ վատ վերաբերմունքի կիրառման վերաբերյալ: Ինչևէ, Պալատը ընդունում է, որ, չնայած լուրջ մտահոգությունների, որոնք արծարծվում են այդ զեկույցներով, վերջիններս միայն նկարագրում են Ուզբեկստանի Հանրապետությունում գոյություն ունեցող ընդհանուր դրությունը: Տվյալ պարագայում, նրանք չեն հաստատում դիմումատուների բերած կոնկրետ ենթադրյալ խախտումները և դրանք պետք է հիմնավորվեն այլ ապացույցների ներկայացմամբ: Գործով հնարավոր չէրավ վերջնական որոշում կայացնել, քանի որ դիմումատուները զրկված էին իրենց փաստարկները հիմնավորելու նպատակով համապատասխան փաստերի ներկայացման համար որոշակի տեղեկությունների հարցման հնարավորությունից:

Պալատը նշում է, որ թուրքական կառավարությունը պնդում էր, որ հանձման մասին միջնորդությունը բավարարվել է միայն այն բանից հետո երբ Ուզբեկստանի կառավարությունից երաշխիքներ է ստացել, մասնավորապես, որ դիմումատուները չեն ենթարկվի խոշտանգումների և մահապատժի: Պալատն ուշադրություն է դարձնում Թուրքիայի կառավարության կողմից Ուզբեկստանի կառավարությանը տրված դիվանագիտական նոտայի, ինչպես նաև այն դատավճռի կայացման ժամկետներին, որով դիմումատուները դատապարտվել էին ազատազրկման: Բացի այդ, Պալատը հաստատում է, որ

ազատագրված վայրի բժիշկների կողմից, որտեղ պահվում էին դիմումատուները, իրականացված բժշկական փորձաքննությունները չհաստատեցին շահագրգիռ անձանց ներկայացուցիչների փաստարկները, որոնց համաձայն դիմումատուները ենթարկվել են 3-րդ հոդվածով արգելվող վերաբերմունքի: Հաշվի առնելով գործի հանգամանքները և գործի նյութերը, Մեծ պալատը գտավ, որ ներկայացված փաստերը բավարար չափով հիմնավորված չեն վճռելու համար, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում:

6-րդ հոդված.

Ինչ վերաբերվում է Թուրքիայում իրականացված էքստրադիցիայի ընթացակարգին, ապա Պալատը հիշեցնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի չէ օտարերկրյա քաղաքացիների մուտքի, բնակության և մեկնելու մասին որոշումների նկատմամբ, քանի որ նման որոշումները չեն առնչվել քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին կամ էլ անձին քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրելուն: Ինչ վերաբերվում է Ուզբեկստանում տեղի ունցած քրեական գործի վարույթներին, Պալատը՝ վկայակոչելով հոդված 3-ի հիման վրա արած իր եզրահանգումները, գտնում է, որ իրեն ներկայացված ապացույցները չեն հաստատել, որ դիմումատուները զրկվել են արդար դատաքննության իրավունքից: Այսպիսով, այս կապակցությամբ 6-րդ հոդվածի 1-ին կետով ոչ մի հարց չի ծագում:

34-րդ հոդված.

Պալատը նշում է, որ այն փաստը, որ Թուրքիան իրականացրել է դիմումատուների էքստրադիցիան առանց պահպանելու Դատարանի Կանոնակարգի կանոն 39-ով նախատեսված ժամանակավոր միջոցառումները, հարց է առաջացնում արդյոք, հաշվի առնելով 3-րդ հոդված առանձնահատուկ բնույթը, առկա 34-րդ հոդվածի խախտում: Պալատը հիշեցնում է, որ անհատական գանգատ ներկայացնելու իրավունքի արդյունավետ իրականացումը իր մեջ ներառում է կողմերի հավասարության սկզբունքի պահպանումը և դիմումատուներին իրենց պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորությունների տրամադրելը: Այսպես, տվյալ պարագայում, չնայած դիմումատուների ներկայացուցիչների ջանքերի, նրանք չկարողացան կապվել դիմումատուներին և հետևաբար հնարավորություն չունեցան հարցումներ անել իրենց փաստարկները հիմնավորելու համար համապատասխան փաստեր ձեռք բերելու նակատակով:

Պալատը հաստատում է, որ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների, միջազգային պայմանագրերի իրավունքի և միջազգային նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ ժամանակավոր միջոցառումների սահմանների հասկացության մեկնաբանումը չի կարող տարանջատվել այն վարույթներից, որոնց ընթացքում դրանք նախատեսվել էին, և գործի, որի կապակցությամբ կիրառվում են դրանք, էության վերաբերյալ որոշումից: Պալատը նաև ընդգծեց, որ անհատական գանգատի իրավունքը Կոնվենցիայով սահմանված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզմի անկյունաքարերից մեկն է:

34-րդ հոդվածի համաձայն, մի կողմից դիմումատուները անհատական զանգատի արդյունավետ իրականացման իրավունք ունենին, որից հետևում է, որ մասնակից պետությունը չպետք է խոչընդոտի դատարանին իրականացնել զանգատի արդյունավետ քննությունը, և մյուս կողմից, դիմումատուն՝ վկայակոչելով 3-րդ հոդվածի խախտումը, իրավասու էր օգտվել զանգատի արդյունավետ քննության իրավունքից, իմանալու համար, թե արդյոք նախատեսված էքստրադիցիան կամ արտաքսումը հանգեցրել են 3-րդ հոդվածի խախտմանը: Դատարանի կողմից Դատարանի Կանոնակարգի կանոն 39-ի հիման վրա տրված հրահանգը նպատակ ուներ թույլ տալ Դատարանին արդյունավետ քննել զանգատը և հանգվել Կոնվենցիայով նախատեսված պաշտպանության միջոցների արդյունավետության մեջ, ինչպես նաև լիազորում էր Նախարարների կոմիտեին հսկել վերջնական վճռի իրականացումը: Ժամանակավոր միջոցառումները, այդպիսով, թույլ տվեցին շահագրգիռ պետությանն ազատվել դատարանի վերջնական վճիռների կատարման իր պարտականությունից, ինչը սահմանված էր Կոնվենցիայի 46-րդ հոդվածով (վճիռների պարտադիր ուժն ու կատարումը):

Տվյալ գործով Դատարանի կողմից մատնանշված [ժամանակավոր միջոցառումների] ձեռնարկումը, առանց կասկածի կօգներ դիմումատուներին ներկայացնել իրենց զանգատները: Այն փաստը, որ դիմումատուները չկարողացան մասնակցել դատական գործի քննությանը կամ հաղորդակցվել իրենց ներկայացուցիչների հետ, խանգարեց նրանց ապացույցների ձեռք բերման և փաստական հանգամանքների վերաբերյալ կառավարության ներկայացրած պնդումները վիճարկելու հարցում: Հաշվի առնելով, որ Կոնվենցիայի անդամ հանդիսացող յուրաքանչյուր պետություն պարտավոր է ձեռնպահ մնալ բոլոր տեսակի գործողություններից կամ անգործությունից, որոնք կարող են վնաս հասցնել վերջնական վճռի ամբողջականությանը և արդյունավետությանը (հոդված 46), և նկատի ունենալով նախորդ հանգամանքները, Պալատը գտավ, որ պարոններ Սամատկուլովի և Աբդուրասալովիչի էքստրադիցիան՝ հաշվի չառնելով կանոն 39-ի հիման վրա տված ծանուցումը, ի չիք է դարձրել դիմումատուների անհատական զանգատի իրավունքը:

Պալատը վճռեց, որ Կոնվենցիայի անդամ հանդիսացող յուրաքանչյուր պետություն, որի համար մատնանշված են եղել ժամանակավոր միջոցառումներ՝ խուսափելու համար ենթադրյալ խախտման գոհ հանդիսացող անձին անվերականգնելի վնաս հասցնելուց, պարտավոր է իրականացնել այդ միջոցառումները և ձեռնպահ մնալ այն գործողություններից և անգործությունից, որոնք կարող են վնաս հասցնել վերջնական վճռի ամբողջականությանը և արդյունավետությանը: Հետևաբար, չիրականացնելով Դատարանի կողմից մատնանշված ժամանակավոր միջոցառումները, Թուրքիան խախտել է Կոնվենցիայի 34-րդ հոդվածով իր վրա դրված պարտականությունները:

**(9) Pedersen and Baadsgaard v. Danmark (Փեդերսենն ու Բաադսգաարդը
ընդդեմ Դանիայի), no 49017/99**

Գործով իրադարձությունները տեղի ունենալու ժամանակ, Կոպենհագենում բնակվող երկու Դանիայի քաղաքացիներ՝ ժորժեն Փեդերսենը և Սթեն Քրիստիան Բաադսգաարդը, որոնք համապատասխանաբար ծնվել են 1939 և 1942 թվականներին, Դանիայում գործող երկու ազգային հեռուստաալիքներից մեկի՝ «Դանմարքս Ռադիո»-ի, լրագրողներ էին: Նրանք պատրաստում էին երկու հեռուստածրագրեր մի դատական գործի վերաբերյալ, որում ամուսինը իր կնոջը սպանելու համար դատապարտվել էր 12 տարի ազատազրկման: Հեռուստածրագրերը եթեր դուրս եկան 1990թ սեպտեմբերի 17-ին և 1991թ ապրիլի 22-ին: Այդ ծրագրերում նրանք քննադատում էին Ֆրեդերիկշաֆենի ոստիկանության կողմից իրականացված հետաքննությունը: Երրորդ ծրագրում ցույց էր տրվում, թե ինչպես է Բաադսգաարդը հարցաքննում մի վկայի՝ տաքսիի վարորդ մի կնոջ, որի ընթացքում մեկնաբանը տալիս է հետևալ հարցերը. «ո՞րն է տաքսիի վարորդի վկայության վճռորոշ մասի անհետացման պատճառը, և ո՞վ, ոստիկանության կամ դատախազության բաժանմունքում, պետք է պատասխանություն կրի դրա համար ...: Եվ արդյո՞ք [հիշատակված ոստիկանության պետն] էր, որ որոշեց, որ վկայության արձանագրությունը չպետք է կցվի գործին: Նա էր արդյո՞ք թե Արագ արձագանքման խմբի ավագ հսկիչը, որ պաշտպանության կողմից, դատավորներից և երդվյալատենակալներից թաքցրել էր վկայի ցուցմունքը»: Եթերի ընթացքում նշվեցին՝ հետաքննության իրականացման պարտականությունը կրող ոստիկանության պետի և Արագ արձագանքման խմբի ավագ հսկիչի անունները և ցուցադրվեցին նրանց նկարները: 1991թ մայիսի 23-ին ոստիկանության պետը զրպարտության համար դիմումատուների և հեռուստաալիքի դեմ բողոքներ կայացրեց ոստիկանություն: 1991թ նոյեմբերի 29-ին Հատուկ վերաքննիչ դատարանը որոշում կայացրեց սպանության գործի վերանայման մասին: Մինևույն ժամանակ, հեռուստածրագրի եթերից հետո ոստիկանության որոշման հիման վրա հետաքննություն սկսվեց: Հետաքննության արդյունքում 1991թ դեկտեմբերի 20-ին ընդունված որոշմամբ հետաքննության մարմինները եկան եզրակացության, որ ոստիկանությունը չի պահպանել գործով նախատեսված կանոնակարգը, համաձայն որի վկան պետք է հնարավորություն ունենա ծանոթանալ իր տրված ցուցմունքներին: 1992թ ապրիլի 13-ին իր կնոջ սպանության մեջ մեղադրված անձն արդարացվեց գործով կայացված դատավճռի վերանայման արդյունքում:

1993թ հունվարի 19-ին լրագրողներին զրպարտության մեղադրանք առաջադրվեց: 1995թ սեպտեմբերի 15-ին Քաղաքային դատարանը նրանց մեղավոր ճանաչեց, սակայն պատիժ չնշանակեց: Ե՛վ լրագրողները և՛ մեղադրող կողմը վերաքննիչ բողոք բերեցին: 1997թ մարտի 6-ին Բարձր դատարանը կայացված մեղադրական դատավճիռը անփոփոխ թողեց և նրանց նկատմամբ նշանակեց 400 դանիական կրոնա (ՊԿԿ) տուգանք (մոտավորապես 53 եվրո), և պարտադրեց նրանց ոստիկանության պետի ժառանգներին (նա այդ ժամանակ արդեն մահացել էր) վճարել 75,000 (ՊԿԿ) (մոտավորապես 10,000 եվրո): 1998թ հոկտեմբերի 28-ին Գերագույն

դատարանն անփոփոխ թողեց կայացված դատավճիռը մեղադրանքի մասով և ավելացրեց տուգանքի չափը մինչև 10,000 ՊԿԿ (մոտավորապես 13,400 եվրո):

1998թ դեկտեմբերի 30-ին դիմումատուն գանգատ ներկայացրեց մարդու իրավունքների եվրոպական դատարան: 2-րդ դիմումատուն մահացավ 1999թ ամռանը: Նրա միակ աղջիկը և ժառանգը՝ Տրին Բաադսգաարդը որոշեց հետամուտ լինել գանգատին: Դանիական լրագրողների արհմիությունը, որպես երրորդ կողմ, 2001թ դեկտեմբերի 17-ին ուղղարկեց իր [գրավոր] դիտողությունները:

Մեծ պալատի վճիռը.

6-րդ հոդված.

Մեծ պալատը հիշատակեց, որ քրեական գործի քննությունը տևել է 5 տարի, 9 ամիս և 9 օր: Ելնելով այն հանգամանքից, որ դատական ընթացակարգը որոշակի բարդություն ուներ և պահանջում էր շատ ժամանակ, ինչպես նաև այն, որ դիմումատուները որոշ չափով նպաստել էին ընթացակարգի տևողության երկարացմանը, Մեծ պալատը վճռեց, որ տեղի չի ունեցել «ողջամիտ ժամկետի» պահանջի խախտում:

10-րդ հոդված.

Երկու կողմն էլ համաձայն են, որ տեղի է ունեցել միջամտություն լրագրողների արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը: Գործում վեճի առարկա է այն հարցը, թե արդյոք այդ միջամտությունը անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում: Դիմումատուները պնդում էին, որ նրանք հեռուստադիտողներին տվել են հնարավորություն որոշելու, թե ով է պատասխանատու սպանության գործում թույլ տված բացթողումների համար: Նրանք հատատում էին, որ իրականացված խոր հետազոտությունների արդյունքում հավաքել են լուրջ և հիմնավորված փաստեր, և ավելին, որ տաքսիի վարորդի կողմից ներկայացված դեպքերի նկարագիրը հիմնավոր փաստ հանդիսացավ գործի վերանայման և դատապարտյալի արդարացման համար: Կառավարությունն իր հերթին առարկում էր, որ լրագրողները դատապարտվել էին ոչ թե ոստիկանությանն ուղղված իրենց քննադատության համար, այլ միայն հիշատակված անձի դեմ ուղղված կոնկրետ, չհիմնավորված և շատ լուրջ մեղադրանքներ ներկայացնելու համար:

Ինչպես և Գերագույն դատարանը, Մեծ պալատը գտավ, որ վերոհիշյալ հեռուստածրագրում լրագրողները հիմնվում էին տաքսու վարորդի հայտարարության ճշմարտացիության վրա, և այնպես էին ներկայացնում գործի հանգամանքները, որ հեռուստադիտողների մոտ տպավորություն էր ստեղծվում, որ խոսքը գնում է արդեն հաստատված փաստերի մասին, և որ ոստիկանությունը թաքցրել էր գործի ապացույցները: Լրագրողների կողմից ընտրված առանձնահատուկ տեսակետը հեռուստադիտողների համար թողնում էր միայն 2 մեկնաբանությունների հնարավորություն. հիմնական ապացույցները թաքցվել են կամ ոստիկանության պետի, կամ էլ վերջինիս և Արագ արձագանքման խմբի ավագ հսկիչի կողմից: Մեծ պալատը նաև նշեց, որ լրագրողները հաշվի չեն առել այն որ հավանական է, որ տաքսու վարորդի

վկայությունը կարող է ճշմարիտ չլինել: Նման լուրջ [մեղադրական] հայտարարությունը չէր կարող համարվել գնահատական-դատողություն, սակայն պարունակում էր փաստացի հայտարարություն: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, թե արդյոք լրագրողները գործել են բարեխղճորեն, ապա Մեծ պալատը վկայակոչում է Գերագույն դատարանի միաձայն որոշումը, որի համաձայն լրագրողների հայտարարությունների ճշմարտացիությունը երբեք չի ապացուցվել: Մեծ պալատը նկատում է, որ ոստիկանության կողմից իրականացրած հետաքննությամբ չի բացահայտվել, որ Ֆրեդերիկշաֆենի ոստիկաններից որևէ մեկը թաքցրել է այդ գործի հետ կապված որևէ ապացույց և ոստիկանության զեկույցը ինքնին չէր պարունակում ոչ մի նշում, որը կվկայեր, որ նրանում որևէ բան ոչնչացվել է:

Մեծ պալատը, հաշվի առնելով, որ հեռուստածրագիրը եթեր էր հեռարձակվել այնպիսի ժամի, երբ հեռուստացույցների մոտ են հավաքվում հեռուստադիտողների մեծ մասը, կասկածի տակ է առնում այն հանգամանքը, որ լրագրողներն իրականացրել են խորը հետազոտություններ, հաստատելու համար իրենց եզրակացությունը, որի համաձայն Ոստիկանության պետը, փաստորեն, թաքցրել էր սպանության գործի ապացույցները: Վճռաբեկ դատարանը ճշմարտացիորեն ընդունեց, որ սույն գործում բախվում են տեղեկություններ տարածելու իրավունքն ու այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը և իրավասու է որոշելու, որ միջամտությունը անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը պաշտպանելու համար:

VI. Լսումները

2003թ լսումներ տեղի են ունեցել հետևյալ 9 գործերով (համատոտ ներկայացված են միայն այն գործերը, որոնց վերաբերյալ մինչև տարեվերջ վճիռներ չեն կայացվել):

(1) Tashin Acar v. Turkey (Թաշին Աքարն ընդդեմ Թուրքիայի, թիվ 26307/95), no 26307/95

Գործ, որի կապակցությամբ անց են կացվել վերալսումներ: Գործի էության վերաբերյալ լսումը անց է կացվել 2003թ հունվարի 29-ին, որը վերաբերում էր 37-րդ հոդվածի կիրառությանը: Այդ նախնական հարցի վերաբերյալ վճիռ կայացվեց 2003թ մայիսի 6-ին (տե՛ս VII Գլուխը ստորև):

(2) Ezeh and Connors v. the United Kingdom (Էզեհը և Քոննորսը ընդդեմ Միացյալ Թագավորության), nos. 39665/98 and 40086/98

Գործ, որի կապակցությամբ անց են կացվել վերալսումներ: Գործի էության վերաբերյալ լսումը տեղի է ունեցել 2003թ մարտի 5-ին, իսկ վճիռը կայացվել է 2003թ հոկտեմբերի 9-ին (տե՛ս VII Գլուխը ստորև):

(3) Maestri v. Italy (Մաեստրին ընդդեմ Իտալիայի), no 39748/98

Ընդդատության զիջման գործ: Գործի էության լսումը տեղի է ունեցել 2003թ հունիսի 25-ին: Գործը վերաբերում է 1944 թվականին ծնված և Վիարեզիո քաղաքում (Իտալիա) բնակվող իտալացի դատավորի՝ Անջելո Մասսինո Մաեստրիի կողմից ներկայացրած գանգատին: Նա դատավոր է և գանգատի ներկայացման ժամանակ Լա Սպեզիայի քաղաքային դատարանի նախագահի պաշտոնակատարն էր:

1993թ նոյեմբերին, դիմումատուի նկատմամբ 1946թ մայիսի 31-ի Թագավորական իրավական դեկրետի 18-րդ հոդվածի հիման վրա կարգապահական վարույթ հարուցվեց, առ այն, որ, 1981թ-ից մինչև 1993թ-ի մարտը նա հանդիսացել է *Grande Oriente d'Italia di Palazzo Giustiniani* մասսոնական կազմակերպության անդամ: 1995թ-ի հոկտեմբերի 10-ի վճռով Դատական բարձրագույն խորհրդի Կարգապահական բաժինը դիմումատուին մեղավոր ճանաչեց, և նախազգուշացում տվեց: Կարգապահական բաժինը հատկապես նշեց, որ դատավորը՝ հանդես գալով որպես Ազատ մասսոնական կազմակերպության անդամ, խախտում էր դատավորի համար սահմանված կարգապահական կանոնները, հիմք ընդունելով մասսոնների և դատավորների երդման միջև առկա բախումը, մասսոնների միջև հարաբերությունների հիերարխիան, պետական արդարադատության մերժումը՝ հօգուտ մասսոնական արդարադատության և մասսոնական կապերի անխախտելիությունը:

Դիմումատուն վճռաբեկ բողոք բերեց, որը, սակայն մնաց առանց բավարարման: Նա պնդում է, որ Կարգապահական բաժնի կայացրած վճռից

հետո նրա կարիերան փակուղու մեջ հայտնվեց: Դիմումատուն բողոքում է, որ նա ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Ազատ մասսոնական կազմակերպության անդամ հանդիսանալու համար: Դիմումատուն պնդում է, որ առկա է Կոնվենցիայի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների խախտում:

Գանգատն ընդունելի է համարվել 2002թ. հուլիսի 4-ին: 2002թ. հոկտեմբերի 10-ին Պալատը գործի ընդդատությունը զիջեց Մեծ պալատին, որի կապակցությամբ կողմերը չառարկեցին:

(4) Gorzelik and others v. Poland (Գորզելիքը ու այլոք ընդդեմ Լեհաստանի), no 44158/98

Գործ, որի կապակցությամբ անց են կացվել վերալսումներ: Գործի տեղյակ վերաբերյալ լսումը տեղի է ունեցել 2003թ հուլիսի 2-ին: Գործը վերաբերում է Վերին Սիլեզիայի բնակիչ հանդիսացող երեք լեհ քաղաքացիների կողմից ներկայացված գանգատին: Դիմումատուներն են՝ համալսարանի դասախոս Ջերի Գորզելիկը՝ ծնվել է 1971թ.ին և բնակվում է Կատովիցեում (Լեհաստան), տնտեսագետ Ռուդոլֆ Կոլոդզիժսզիկը՝ ծնվել է 1940 թվականին և բնակվում է Ռիբնիկում (Լեհաստան), և մետաղագործ երվին Սովանը՝ ծնվել է 1944 թ.-ին և բնակվում է Կատովիցեում:

Դիմումատուները և 190 այլ անձինք փորձել են մի միավորում ստեղծել, որը կոչվում էր «Ազգությամբ սիլեզիացիների միություն» (*Zwiazek Ludnosci Narodowosci Slaskiej*): Լեհաստանի իշխանությունները մերժել են գրանցել միավորումը՝ պատճառաբանելով, որ թե՛ միության անվանումից և թե՛ միության հուշագրի որոշ դրույթներից, որում Սիլեզիացիները բնորոշվում էին որպես «ազգային փոքրամասնություն», հետևում է, որ նրանց հիմնական նպատակն է շրջանցել ընտրական օրենսդրությունը: Բացի այդ, եթե Սիլեզիացի անդամները ճանաչվեին որպես «ազգային փոքրամասնություն», նրանք ինքնաբերաբար կստանային անվերապահ և օրենքով պարտադրվող արտոնություններ: Այս որոշման դեմ դիմումատուների բերած բողոքները մերժվեցին:

Դիմումատուները պնդում են, որ նրանց միության գրանցման մերժումը խախտում է նրանց միավորման ազատության իրավունքը, որը սահմանված է Կոնվենցիայի 11-րդ հոդվածով:

2001թ դեկտեմբերի 20-ի վճռով Պալատը միաձայն եզրակացրեց, որ 11-րդ հոդվածը չի խախտվել, հիմք ընդունելով, որ Լեհաստանի իշխանությունները գործել են ողջամիտ՝ նպատակ հետապնդելով պատշապանել երկրի ընտրական համակարգը: Դիմումատուները պահանջեցին, որ գործը հանձնվի Մեծ պալատին: Մեծ պալատի հանձնախումբը 2003թ հուլիսի 10-ին ընդունեց այդ պահանջը:

**(5)Cooper v. the United Kingdom (Կուպերն ընդդեմ Միացյալ
Թագավորության), no 48843/99
Grievs v. the United Kingdom (Գրիվեսն ընդդեմ Միացյալ
Թագավորության), no 57067/00**

Ընդդատության զիջման գործ: Գործի ընդունելիության վերաբերյալ և
ըստ էության լուսնները տեղի են ունեցել 2003թ հոկտեմբերի 1-ին, իսկ
վճիռները կայացվել են 2003թ դեկտեմբերի 16-ին (տե՛ս VII Գլուխը ստորև):

(6)Oneryildiz v. Turkey (Օներիլիդիզն ընդդեմ Թուրքիայի), no 48939/99

Գործ, որի կապակցությամբ անց են կացվել վերալսումներ: Գործի
էության վերաբերյալ լսումը տեղի է ունեցել 2003թ մայիսի 7-ին: Գործը
վերաբերում է Մասալահ Օներիլիդիզի կողմից ներկայացված գանգատին,
որը ծնվել է 1955թ-ին և Թուրքիայի քաղաքացի է: Իրադարձությունների
ծավալման ժամանակ իր ընտանիքի 12 անդամների հետ նա ապրում էր
Ուննանիյեի (Ստամբուլ) Կազիմ Կարաբեքիր աղքատ թաղամասում
(Ստամբուլ):

Կազիմ Կարաբեքիրի տարածքը կիսակառույց վիճակում գտնվող
չինությունների ամբողջություն է, որոնք առանց թույլտվության կառուցվել են
աղբանոցի շրջակայքում գտնվող հողերի վրա, իսկ աղբանոցը սկսած 1970-
ական թվականներին համատեղ օգտագործվել է չորս թաղային խորհուրդների
կողմից Ստամբուլի քաղաքային խորհրդի ղեկավարությամբ և
պատասխանատվությամբ: Փորձագիտական քննության զեկույցը, որը
կազմվել էր 1991 է մայիսի 7-ին Էսքեդարի Առաջին ատյանի դատարանի
պահանջով, որին հայցով դիմել էր Մրանիայի քաղաքապետարանը, գրավեց
իշխանությունների ուշադրությունը: Մասնավորապես ուշագրավ էր այն
հանգամանքը, որ ոչ մի միջոց չէր ձեռնարկվել քայքայվող աղբի հետևանքով
առաջացած մեթանի պայթյունները կանխարգելելու համար: Այդ զեկույցը մի
շարք լուրջ վիճաբանությունների տեղիք տվեց գործին առնչվող
քաղաքապետարանների միջև: Սակայն, նախքան նրանցից յուրաքանչյուրի
կողմից հարուցված գործն իր ավարտին կհասցվեր, 1993թ ապրիլի 28-ին
աղբակույտերից մեկի մոտ տեղի ունեցավ մեթանի պայթյուն: Աղբակույտից
պոկված արտանետումները կլանեցին ներքևում տեղակայված ավելի քան 10
տուն, որոնք գտնվում էին աղբակույտերի դիմաց: Դրանց թվում էր նաև
դիմումատուի տունը, որի հետևանքով զոհվեցին նրա ընտանիքի 9
անդամները:

Գործով իրականացված քրեական և վարչական քննությունների
արդյունքում Մրանիայի և Ստամբուլի քաղաքապետերը կանգնեցին
դատարանի առջև. Մրանիայի քաղաքապետը՝ աղբակույտերի մոտ
տեղակայված անօրինական տնակների վերացման կապակցությամբ իր
պարտականությունը չիրականացնելու համար, իսկ Ստամբուլի
քաղաքապետը՝ աղբանոցը կարգի հրավիրելու կամ փակելու իր
պարտավորությունը չկատարելու համար՝ ի հեճուկս 1991 թվականի մայիսի 7-
ի փորձագիտական զեկույցի առաջարկությունների: 1996թ ապրիլի 4-ին
համապատասխան քաղաքապետերը «իրենց պարտականությունների

կատարման հարցում ցուցաբերած անփութության համար» մեղավոր ճանաչվեցին, յուրաքանչյուրի հանդեպ 160.000 թուրքական լիրա («TRL») տուգանք նշանակվեց (այս գումարը այդ ժամանակ համարժեք էր մոտավորապես 9,70 եվրոի(EUR)) և դատապարտվեցին առնվազն երեք ամիս ազատազրկման՝ համաձայն Քրեական օրենսգրքի 230 հոդվածի: Նրանց պատիժն այնուհետև փոխարինվեց տուգանքով, որի վճարումը կասեցվեց:

Արդյունքում դիմումատուն իր և իր ողջ մնացած 3 երեխաների անունից վնասների հատուցման վերաբերյալ հայց ներկայացրեց Ստամբուլի վարչական դատարան՝ մեղադրելով իշխանություններին իր ազգակիցների մահվան և իր գույքի ոչնչացման մեջ: 1995թ նոյեմբերի 30-ի վճռով վերջիններիս պարտադրվեց դիմումատուին և նրա երեխաներին վճարել 100,000,000 լիրա («TRL»)՝ պատճառված ոչ նյութական վնասի համար և 10,000,000 լիրա պատճառված նյութական վնասի համար (այդ գումարները այդ ժամանակ համարժեք էին համապատասխանաբար 2,077 և 208 եվրոի), վերջին գումարը սահմանված էր տնային տնտեսության որոշ գույքի ոչնչացման համար: Այդ գումարները չեն վճարվել դիմումատուին սակայն նա վճռի հարկադիր կատարման համար վարույթ չի հարուցել:

Դիմումատուն գործի փաստերի հիման վրա պնդում է, որ խախտվում են Կոնվենցիայի 2-րդ հոդվածի, 6-րդ հոդվածի 1-ին կետի, 8-րդ և 10-րդ հոդվածների, ինչպես նաև Առաջին Արձանագրության 1-ին հոդվածի դրույթները:

2002թ. հունիսի 18-ին կայացրած իր վճռում Պալատը, 5 ձայնով ընդդեմ 2-ի եզրակացրեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում՝ դիմումատուի հարազատների մահվան և դատական համակարգի անարդյունավետության արդյունքում, ինչպես նաև 4 ձայնով ընդդեմ 3-ի, որ տեղի է ունեցել Առաջին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

2002թ. սեպտեմբերի 13-ին կառավարությունը պահանջեց գործը հանձնել Մեծ պալատին: 2002թ նոյեմբերի 6-ին Մեծ պալատի հանձնախումբն ընդունեց այդ պահանջը:

(7) Azinas v. Cyprus (Ազինասն ընդդեմ Կիպրոսի), no 56679/00

Գործ, որի կապակցությամբ անց են կացվել վերալսումներ: Գործի ելքային վերաբերյալ լսումը տեղի է ունեցել 20003թ հունիսի 4-ին: Գործը վերաբերվում է Կիպրոսի քաղքացի Անդրեաս Ազինասի կողմից ներկայացված գանգատին, ով ծնվել է 1981թ, և բնակվում է Նիկոսիայում (Կիպրոս):

Սկսած այն պահից, երբ 1960 թվականին ստեղծվեց Կիպրոսի Հանրապետությունը մինչև 1981թ.-ին նրան աշխատանքից հեռացնելու պահը, պարոն Ազինասը Նիկոսիայում զբաղեցնում էր Հանրային ծառայության Հանագործակցված զարգացման դեպարտամենտի ղեկավարի պաշտոնը: 1982թ հուլիսի 28-ին Հանրային ծառայության հանձնաժողովը նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցեց և որոշում կայացրեց նրան պաշտոնից ազատել, հիմք ընդունելով, որ 1981թ ապրիլի 8-ին Նիկոսիայի շրջանային դատարանը նրան մեղավոր ճանաչեց գողության, պաշտոնական լիազորությունները և վստահությունը չարաշահելու համար և դատապարտել է 18 ամիս ազատազրկման: Հանրային ծառայության հանձնաժողովը որոշման

մեջ նշել էր, որ Պարոն Ազինասը կառավարում էր վերոհիշյալ բաժանմունքի միջոցներն այնպես, կարծես թե դրանք իր անձնական սեփականությունն էին հանդիսանում: Օրենսդրության պահանջների համապատասխան, պաշտոնից ազատվելով դիմումատունը զրկվեց իր պաշտոնաթողության վճարներից, ներառյալ իր կենսաթոշակը՝ սկսած շրջանային դատարանի կողմից իրեն ազատագրված դատատապարտելու մասին վճռի կայացման օրվանից: Պարոն Ազինասը դիմեց Գերագույն դատարան այդ որոշումը դատական կարգով վերանայելու խնդրանքով:

1991թ հունիսի 12-ին Գերագույն դատարանը Հանրային ծառայության որոշումն անփոփոխ թողեց: Գերագույն դատարանը նշեց, որ նա չի կարող վերանայել ո՛չ պատասխանատվության խստությունը, որը սահմանվել է կարգապահական մարմնի կողմից (եթե վերջինս չի անցել իր հայեցողության սահմանները), ո՛չ էլ այն ընթացակարգը, որի կիրառմամբ նա գնահատել է գործի փաստերը: Գերագույն դատարանը գտավ, որ Հանրային ծառայության հանձնաժողովը միայն սահմանել է պատասխանատվության բնույթը, իսկ այն, որ դիմումատունը զրկվել է կենսաթոշակի հետ կապված իր հատուցումներից, ինքնաբերաբար հանդիսացել է այդ պատժի կիրառման հետևանք: Պարոն Ազինասի բողոքը մնաց առանց բավարարման:

Պարոն Ազինասը պնդում է, որ Հանրային ծառայությունից ազատելով և իրեն այնուհետև թոշակի իրավունքներից զրկելով խախտվել է 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իր գույքից անարգել օգտվելու իրավունքը:

2002թ. հունիսի 20-ին կայացրած իր վճռով, Պալատը 5 ձայնով ընդդեմ մեկի եզրակացրեց, որ տեղի է ունեցել 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

2002թ. սեպտեմբերի 13-ին, Կառավարությունը պահանջեց գործը հանձնել Մեծ պալատին: 2002թ. նոյեմբերի 6-ին Մեծ պալատի հանձնախումբը ընդունեց այդ պահանջը:

(8) Assanidze v. Georgia (Ասանիձեն ընդդեմ Վրաստանի), no.71503/01

Ընդդատության զիջման գործ: Գործի էության վերաբերյալ լսումը տեղի է ունեցել 2003թ. նոյեմբերի 19-ին: Գործը վերաբերում է Վրաստանի քաղաքացի՝ Թենգիզ Ասանիձեի կողմից ներկայացված գանգատին, ով ծնվել է 1944թ.-ին և ներկայումս կալանքի տակ է պահվում Բաթումիում (Վրաստան):

Դիմումատունը Աջարիայի Ինքնավար Հանրապետության (ԱՀ)՝ մայրաքաղաք Բաթումիի քաղաքայետն էր և նաև Աջարական Հանրապետության (ԱՀ) Գերագույն խորհուրդի պատգամավոր: Նա ձերբակալվել էր 1993թ հոկտեմբերի 4-ին և մեղադրվել Բաթումիի ծխախոտագործական ընկերությունում անօրինական ֆինանսական գործարքների իրականացման և հրազենի անօրինական տիրապետման և գործածության մեջ: 1994թ նոյեմբերի 28-ին դիմումատունը նա պատժվում է ազատագրված ութ տարի ժամկետով անձնական գույքի բռնագրավմամբ և ընկերության կրած նյութական վնասները հատուցելու պարտավորությամբ: 1995թ ապրիլի 27-ին [Գերագույն դատարանը] անփոփոխ թողեց դատավճիռը ապօրինի գործարքների մասով, սակայն մյուս մասերը բեկանեց: 1999թ

հոկտեմբերի 1-ին դիմումատուին Հանրապետության նախագահի կողմից ներում շնորհվեց, սակայն Աջարիայի տեղական իշխանության մարմինները նրան ազատ չարձակեցին:

1999թ դեկտեմբերի 11-ին դիմումատուին, ով դեռևս գտնվում էր անազատության մեջ՝ չնայած նախագահի կողմից շնորհված ներմանը, նոր մեղադրանք է առաջադրվում: 2000թ. հոկտեմբերի 2-ին Աջարիայի Ինքնավար Հանրապետության Գերագույն դատարանի կողմից դիմումատուն պատժվում է 12 տարի ազատազրկմամբ: Չնայած 2001 թվականի հունվարի 29-ին Վրաստանի Գերագույն դատարանը բեկանում է մեղադրական դատավճիռն ու կայացնում արդարացման դատավճիռ, Աջարիայի իշխանությունները նրան ազատ չեն արձակում: Ի հետևանք դրան, դիմումատուն, որի առողջությունը քայքայվում է, մինչ օրս արդեն 3 տարի է ինչ կալանքի տակ է պահվում Բաթումիի Տարածքային անվտանգության նախարարության ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու խցում:

Վկայակոչելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ կետերը, 4-րդ հոդվածը, 6-րդ հոդվածի 1-ին կետը, 10-րդ և 13-րդ հոդվածները, ինչպես նաև Չորրորդ Արձանագրության 2-րդ հոդվածը, դիմումատուն պնդում է, որ նրա կալանավորումն անօրինական է և որ նա ներպետական ատյաններում իր անազատությունը վիճարկելու հարցում զրկված է եղել արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներից:

2002թ նոյեմբերի 12-ին գանազորը հայտարարվեց մասամբ ընդունելի: 2003թ մարտի 18-ին Պալատն ընդդատությունը զիջեց Մեծ պալատին:

(9) Vo v. France (Վոն ընդդեմ Ֆրանսիայի), no. 53924/00

1991թ նոյեմբերի 27-ին, երբ դիմումատուն ուներ վեց ամսյա հղիություն, այցելեց «Օտել Դյո» հիվանդանոց՝ բժշկական ստուգում անցնելու համար: Նույն օրը մեկ այլ կին, որի անունն էր Թի Թանի Վան Վո նույն հիվանդանոցում պետք է պարույր հեռացներ: Քանի որ երկու կանայք էլ ունեին միևնույն ազգանունը բժիշկը, դիմումատուին ենթարկելով բժշկական քննության, թյուրիմացաբար ծակում է նրա ամնիոտիկ պարկը, ինչը թերապևտիկ աբորտի անհրաժեշտություն է առաջացնում:

1991թ. դիմումատուի կողմից ներկայացված բողոքի հիման վրա, բժիշկը մեղադրվում է առողջությանը անզգուշությամբ վնաս պատճառելու մեջ, սակայն պատժի չափը հետագայում մեղմացվում է և կատարված հանցագործությունը վերաորակվում անզգուշ սպանության: 1996թ. հունիսի 3-ի դատավճռով Լիոնի քրեական գործերով դատարանը արդարացնում է բժշկին: Դիմումատուն այդ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերում: 1997թ մարտի 13-ին Լիոնի Վերաքննիչ դատարանը բեկանեց քրեական գործերով դատարանի դատավճիռը և կայացրեց մեղադրական դատավճիռ՝ բժշկին մեղավոր ճանաչելով անզգուշ սպանության մեջ: Այդ դատավճռով բժիշկը պատժվում է 6 ամիս ազատազրկմամբ և 10,000 ֆրանկ տուգանքով: 1999թ. հունիսի 30-ին վճռաբեկ դատարանը բեկանեց վերաքննիչ դատարանի դատավճիռը՝ հիմնավորելով որ առկա չէ անզգուշ սպանության հանցակազմ և այդպիսով հրաժարվեց պտուղը դիտել որպես մարդ արարած, որը ընկնում է քրեական օրենքի պաշտպանության տակ:

Վկայակոչելով Կոնվենցիայի 2-րդ հոդվածը, դիմումատուն բողոքում է, որ ներպետական իշխանությունները հրաժարվում են իր չծնված երեխայի ոչ միտումնավոր սպանությունը որպես անզգույշ սպանություն որակելուց: Նա նշում է, որ Ֆրանսիան պարտավորություն ունի ընդունել այնպիսի քրեական օրենսդրություն, որը կպայքարի նման ոտնձգությունների դեմ և պատիժ կսահմանի դրանց համար:

2003թ. մայիսի 22-ին, Պալատը, որին հանձնվել էր գործը, զիջեց այդ գործի ընդդատությունը հօգուտ Մեծ պալատի: 2003թ նոյեմբերի 25-ին, Մեծ պալատի նախագահը հնարավորություն տվեց հասարակական կազմակերպություններին՝ Family Planning Association (Ընտանիքի պլանավորման ասոցիացիա) (Լոնդոն), Center for Reproductive rights (Վերարտադրողական իրավունքների կենտրոն) (Նյու Յորք) գործին մասնակցել որպես 3-րդ կողմ:

VI. Գանգատների ընդունելիության մասին որոշումներ

Մեծ պալատը ընդունելի է հայտարարել 3 գործ (կապված 6 գանգատների հետ), սակայն ոչ մի առանձին որոշում չի կայացրել ընդունելիության վերաբերյալ, քանի որ այդ որոշումները կայացվել են վճիռների հետ միաժամանակ:

Kleyn and Others v. the Netherlands (Քլեյն ու այլոք ընդդեմ Նիդեռլանդների) nos. 39343/98, 39651/98, 43147/98 և 46664/99

Մեծ պալատը այս գանգատները 2003թ ապրիլի 9-ին հայտարարել է ընդունելի: Վճիռը կայացվել է 2003թ մայիսի 6-ին (տե՛ս VII Գլուխը ստորև):

Cooper v. United Kingdom (Կուպերն ընդդեմ Միացյալ Թագավորության), no48843/99

Grieves v. United Kingdom (Գրիվեսն ընդդեմ Միացյալ Թագավորության), no 57067/00

Մեծ պալատը հայտարարել է այս գանգատները ընդունելի 2003թ դեկտեմբերի 3-ին: Վճիռները կայացվել են 2003թ դեկտեմբերի 16-ին (տե՛ս VII Գլուխը ստորև):

VII. Վճիռներ

(1) Refah Partisi v. Turkey (Ռեֆահ Պարտիզին ընդդեմ Թուրքիայի), no 41340/98

Առաջին դիմումատուն՝ Ռեֆահ Պարտիզին («Բարօրություն» քաղաքական կուսակցություն - «Ռեֆահ») քաղաքական կուսակցություն էր, որը հիմնադրվել էր 1983թ հուլիսի 19-ին: Երկրորդ դիմումատուն այդ կուսակցության նախկին նախագահն է՝ Նաքմեթթին Էրբաքանը, որը իրադարձությունների ծավալման ժամանակ պատգամավոր էր: Երրորդ և

չորրորդ դիմումատուները՝ Սեվքեթ Քազանը և Ահմետ Թեքդալը քաղաքական գործիչներ և իրավաբաններ են: Իրադարձությունների ծավալման ժամանակ երկուսն էլ պատգամավորներ էին և Ռեֆահի փոխնախագահներ:

1997թ. մայիսի 21-ին Վճռաբեկ դատարանի Պետական գլխավոր իրավախորհրդատուն Թուրքիայի Սահմանադրական դատարան Ռեֆահի լուծարման պահանջով հայցադիմում ներկայացրեց, որով նա մեղադրում էր Ռեֆահին որ այն վերածվել է «աշխարհիկ սկզբունքներին հակասող գործունեությամբ զբաղվող» կենտրոնի: Ի պաշտպանություն իր ներկայացրած հայցի, նա վկայակոչում էր Ռեֆահի անդամների և ղեկավարների մի շարք գործողություններ և արված հայտարարություններ, որոնք նրա պնդմամբ ներառում էին նտքեր, որ կուսակցության որոշ նպատակներ, ինչպիսիք են օրինակ՝ շարիաթի և թեոկրատիկ կարգի հաստատումը, անհամատեղելի են ժողովրդավարական հասարակության պահանջների հետ:

Սահմանադրական դատարանում դիմումատուի ներկայացուցիչները վկայակոչում էին, որ դատախազությունը հիմնվում էր բացառապես վիճելի ելույթների քաղվածքների վրա՝ խեղաթյուրելով դրանց իմաստը և դիտարկելով դրանք համատեքստից դուրս: Դիմումատուի ներկայացուցիչները նշում էին նաև, որ Ռեֆահը, որը ժամանակին մեկ տարվա ընթացքում գտնվում էր կոալիցիոն կառավարության իշխանության ղեկին, միշտ պահպանել է աշխարհիկ կանոնները և բոլոր տեսակի կրոնական հավատքները, և որ պետք է Ռեֆահը շփոթել այնպիսի քաղաքական կուսակցությունների հետ, որոնք նպատակ են հետապնդում հաստատել տոտալիտար ռեժիմ: Նրանք նաև ավելացնում էին, որ Ռեֆահի ղեկավարները ծանոթացել են գործում ներառված որոշ ելույթներին միայն լուծարման մասին հայցին ծանոթանալուց հետո, և նրանք կուսակցությունից հեռացրել են այդ ելույթների հեղինակներին, որպեսզի Ռեֆահը չդիտարկվի որպես անօրինական գործողությունների «կենտրոն»՝ քաղաքական կուսակցությունների գործունեության կարգավորման մասին օրենքի իմաստով:

1998թ հունվարի 16-ի վճռով, Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց Ռեֆահի լուծարման մասին, հիմք ընդունելով այն, որ կուսակցությունը դարձել է «Աշխարհիկ սկզբունքներին հակասող գործունեության կենտրոն»: Դատարանը նաև որոշեց, որ Ռեֆահի գույքը փոխանցվի Պետական գանձապետարան: Սահմանադրական դատարանը, նաև գտավ, որ կուսակցության ղեկավարների, հատկապես Նեկմեթին Էրկաքանի, Սեվքեթ Քազանի և Ահմեդ Տեքդալի հրապարակային ելույթները, ուղղակիորեն նպաստեցին նրան, որ Ռեֆահը պատասխանատվություն կրի իր գործողությունների՝ սահմանադրականությանը համապատասխանության առումով: Ի հետևանք դրան, դատարանը վերջիններիս գրկեց պատգամավորի կարգավիճակից և որոշակի պետական պաշտոններ զբաղեցնելու իրավունքից՝ 5 տարի ժամանակով:

1998թ. մայիսի 22-ին դիմումատուների գանգատները ներկայացվեցին Սարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով, և դրանք 1998թ. նոյեմբերի 1-ին փոխանցվեցին դատարան: Գանգատները միացվեցին և 2000թ հոկտեմբերի 3-ին որոշում կայացվեց դրանց մասնակի ընդունելիության վերաբերյալ: 2001թ հուլիսի 31-ին Դատարանը վճիռ կայացրեց (3-րդ Բաժանմունք), որով եզրակացրեց, 4 ձայնով՝ ընդդեմ 3-ի, որ տեղի չի ունեցել

11-րդ հոդվածի խախտում և միաձայն՝ որ ոչ մի այլ հարց չի ծագում 9-րդ, 10-րդ, 14-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածներով, ինչպես նաև 1-ին Արձանագրության 1-ին և 3-րդ հոդվածներով: 2001թ. հոկտեմբերի 30-ին դիմումատուները պահանջեցին գործը հանձնել Մեծ պալատին: 2001թ. դեկտեմբերի 12-ին, Մեծ պալատի հանձնախումբը ընդունեց այդ պահանջը և լսում տեղի ունեցավ 2002թ. հունիսի 19-ին:

Մեծ պալատը 2003թ. փետրվարի 13-ին միաձայն վճռեց, որ տեղի չի ունեցել 11-րդ հոդվածի խախտում և որ չկար անհրաժեշտություն առանձին քննության առնել 9-րդ, 10-րդ, 14-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների հիման վրա ներկայացված գանգատները, ինչպես նաև 1-ին Արձանագրության 1-ին և 3-րդ հոդվածները:

(2) *Odievre v. France* (Օդիեվլըն ընդդեմ Ֆրանսիայի), no 42326/98

Պասկալ Օդիեվլըն Ֆրանսիայի քաղաքացի է, ծնվել է 1965թ. և բնակվում է Փարիզում: Նա անգործունակ է: Սույն գանգատը վերաբերում է ծննդի մասին տեղեկությունների գաղտնիության վերաբերյալ կանոններին, որը խոչընդոտել է Դիմումատուին իր հարազատ ընտանիքի վերաբերյալ տեղեկություններ ստանալ: Դիմումատուն ծնվել է 1965թ.-ին, Փարիզում: Նրա մայրը պահանջել էր, որպեսզի իր երեխայի ծննունդը գաղտնի պահվի և Սոցիալական ապահովության բաժնում ստորագրել էր համապատասխան փաստաթուղթ, որով նա հրաժարվում էր իր երեխայի նկատմամբ իրավունքներից: Դիմումատուն հանձնվեց երեխաների սոցիալական օգնության և երիտասարդության պաշտպանության ծառայությանը և գրանցվեց որպես պետության խնամարկյալ: Այնուհետև դիմումատուն որդեգրվեց տիկին և պարոն Օդիեվլների կողմից, որոնց ազգանունը նա մինչ այժմ շարունակում է կրել:

1990թ. երեխաների սոցիալական օգնության ծառայության Սեն քաղաքի բաժանմունքում դիմումատուն ծանոթացավ իր խնամակալության մասին գործի նյութերին և կարողացավ որոշակի չբացահայտված տեղեկություններ ձեռք բերել իր հարազատ ծնողների մասին: 1998թ. հունվարի 27-ին դիմումատուն հայցադիմում ներկայացրեց Փարիզի Առաջին ատյանի դատարան թույլտվություն ստանալու համար «բացահայտելու իր ծննդյան գաղտնիքը, ծանոթանալու բոլոր փաստաթղթերին, ակտերին և ծննդյան վկայականների քաղվածքներին»: Դիմումատուն պարզաբանեց դատարանին, որ նա տեղեկություններ ունի, որ իր հարազատ ծնողները 1963թ. ծնունդ են տվել մի տղայի իսկ 1965թ-ից հետո կրկին՝ 2 տղայի: Ինչևէ, երեխաների սոցիալական օգնության ծառայությունը մերժել է դիմումատուին տրամադրել իր եղբայրների ինքնության վերաբերյալ տեղեկություններ, այն հիմքով, որ դա կարող է խախտել գաղտնիքը: Դիմումատուն պնդում էր, որ իր եղբայրների գոյության մասին իր տեղեկացված լինելը հիմնավորում էր ծննդյան գաղտնիության բացահայտմանն ուղղված իր դիմումը:

1998թ. փետրվարի 2-ին դատարանի քարտուղարը գործը ուղղարկեց դիմումատուի փաստաբանին, նշելով. «գործի հանգամանքներից հետևում է, որ դիմումատուն գուցե պետք է դիմի վարչական դատարան, հնարավորության դեպքում ստանալու համար թույլտվություն, որը հնարավորություն կտա

ղեկավար մարմիններից պահանջել բացել իր ծննդյան գաղտնիքը, սակայն նման որոշումը, ամեն դեպքում կհակասի 1993թ. հունվարի 8-ի օրենքին»:
(Օրենքը նախատեսում է, որ հարազատ մոր մասին տեղեկությունների բացահայտման մասին դիմումը չի կարող բավարարվել, եթե ծննդի գաղտնիության վերաբերյալ համաձայնագիր է կնքվել ծննդաբերության ժամանակ):

1998թ. մարտի 12-ին գանգատը ներկայացվեց Մարդու իրավունքների եվրոպական Յանձնաժողով, իսկ 1998 թ. նոյեմբերի 1-ին փոխանցվեց Դատարան: 2001թ. հոկտեմբերի 16-ին գանգատի ընդունելիության և էության վերաբերյալ լսումից հետո Պալատը (3-րդ Բաժանմունք) գանգատը հայտարարվում է ընդունելի: 2002թ. հունիսի 24-ին Պալատը գործի ընդդատությունը զիջեց Մեծ պալատին, Կողմերից ոչ մեկը դրան չառարկեց: Դատական լսումը տեղի ունեցավ 2002թ. հոկտեմբերի 9-ին:

2003թ. փետրվարի 13-ին կայացված վճռով՝ Մեծ ապալտը, 10 ձայնով՝ ընդդեմ 7-ի եզրակացրեց, որ տեղի չի ունեցել 8-րդ հոդվածի խախտում, և 10 ձայնով՝ ընդդեմ 7-ի, որ տեղի չի ունեցել 8-րդ հոդվածի համակցությամբ 14-րդ հոդվածի խախտում:

(3) Tashin Acar v. Turkey (Թաշին Աքարն ընդդեմ Թուրքիայի), no 26307/95

Դիմումատուն՝ Թաշին Աքարը, Թուրքիայի քաղաքացի է, ծնվել է 1970թ.-ին և բնակվում է Սոլեմուունա քաղաքում (Շվեդիա): Գործը վերաբերում է նրա եղբոր՝ Մեհմետ Սալիմ Աքարի անհետացմանը: Վերջինս ազարակատեր էր Ամբար գյուղում, որը գտնվում է Բիսմիլի շրջանում՝ Թուրքիայի հյուսիս-արևելքում: Դիմումատուի կողմից հաղորդած տվյալների համաձայն, 1994թ. օգոստոսի 20-ին նրա եղբայրը առևանգվել է երկու անհայտ անձանց կողմից, որոնք ենթադրյալ ոստիկանության աշխատողներ էին: Մահմետ Սալիմ Աքարի ընտանիքը բազմաթիվ գանգատներ և բողոքներ է ներկայացրել իշխանություններին՝ կապված վերջինիս անհետացման հետ, իմանալու համար ու՞ր և ինչի՞ համար է նա կալանավորվել: Ըստ կառավարության, դիմումատուի եղբոր առևանգումից և անհետացումից հետո համապատասխան մարմինների կողմից իրականացվել են մի շարք արդյունավետ հետաքննություններ: Նրա անունը մինչ այժմ գտնվում է Թուրքիայում ոստիկանության կողմից հետախուզվող անձանց ցուցակում:

2001թ. օգոստոսի 27-ին, Թուրքիայի կառավարությունը Միակողմանի հայտարարագիր է ուղարկում Դատարան, որում հայտնում է իր ակտիվացումը դիմումի ներկայացման համար պատճառ հանդիսացած գործողությունների կապակցությամբ և առաջարկում է դիմումատուին *ex gratia* վճարել 70,000 լիրա սթերլինգ, փաստացի նյութական և ոչ նյութական վնասը և կատարված ծախսերը հատուցելու համար: Կառավարությունը խնդրում է Դատարանին, Կոնվենցիայի 37-րդ հոդվածի հիման վրա, հանել գանգատը գործերի ցուցակից: Իր հերթին, դիմումատուն, խնդրում է դատարանին չընդունել կառավարության առաջարկը, քանի որ, իր կարծիքով, հայտարարագրի պայմանները չեն բավարարում իրեն: Դիմումատուն հատկապես ընդգծում էր, որ հայտարարագիրը չի ներառում ոչ մի դրույթ այն մասին, որ տեղի է ունեցել

Կոնվենցիայի որևէ նորմի խախտում իր բերած գանգատի կապակցությամբ, ինչպես նաև, որ Մահմետ Սալիմ Աքարը առևանգվել է Պետական գործակալների կողմից, և որ նա պետք էր մահացած ճանաչվեր: Նա այնուհետ պնդում էր, որ հայտարարագիրը նաև չի պարունակում ոչ մի դրույթ, որով կառավարությունը կպարտավորվեր իրականացնել գործի հանգամանքների հետաքննություն և որ փոխհատուցումը կտրվի *ex gratia*.

2002թ. ապրիլի 9-ի վճռով Պալատը որոշեց, 6 ձայնով՝ ընդդեմ 1-ի, գանգատը համձնել Մեծ պալատին: 2002թ. սեպտեմբերի 4-ին Մեծ պալատի հանձնախումբը ընդունեց այդ պահանջը:

2003թ. մայիսի 6-ին կայարած վճռով Մեծ պալատը, 16 ձայնով՝ ընդդեմ 1-ի, որոշեց մերժել կառավարության խնդրանքը, որը նպատակ էր հետապնդում գանգատը հանել գործերի ցուցակից, և որոշեց շարունակել գործի ըստ էության քննությունը:

**(4) Kleyn and others v. Holand (Քլեյնն ու այլոք ընդդեմ Հոլանդիայի),
nos 39343/98, 39651/98, 43147/98, 46664/99**

Գործը վերաբերում է չորս գանգատների, որոնք ներկայացվել են Հոլանդիայի 23 քաղաքացիների և 12 հոլանդական կազմակերպությունների կողմից, որոնց բնակության վայրերը կամ գտնվելու վայրերը տեղակայված են նոր՝ *Betuweroote* երկաթգծի երկարությամբ կամ հարևանությամբ, որի շինարարությունը դեռ շարունակվում է և որը հատում է Հոլանդիան՝ Ռոտտերդամի նավահանգստից մինչև Գերմանիայի սահմանը:

Բոլոր դիմումատուները մասնակցել են տեղի ունեցած միջոցառումներին՝ ուղղված նոր երկաթուղային գիծ կառուցելու մասին հաստատված նախագահի հրամանը բողոքարկելուն (այսուհետ՝ նախագծի մասին հրամանը «Tracebesluit»), որը ընդունվել էր Տրանսպորտային համակարգի (ինֆրաստրուկտուրայի) շինարարության պլանավորման մասին ակտով նախատեսված ընթացակարգին համապատասխան (Tracewet), որը ուժի մեջ է մտել 1994թ. հունվարի մեկից: 1998թ. մայիսի 28-ի որոշմամբ Պետական խորհրդի Վարչական վեճերը կարգավորող բաժանմունքը մերժեց դիմումատուների կողմից ներկայացված բողոքների մեծամասնությունը: Մինչ այդ հայցերը բավարարվեցին, 1998թ. ընդունվեցին նոր որոշումներ: Առանձին որոշումներով, որոնք կայացվեցին 1999թ. ապրիլի 16-ին և 2000թ. հուլիսի 25-ին, Պետական խորհրդի Վարչական վեճերը կարգավորող բաժանմունքը մերժեց այդ նոր հրամանների դեմ բերված բողոքները:

1997թ. հուլիսի 8-ին և 1998թ. մարտի 16-ին Սարդու իրավունքների եվրոպական Հանձնաժողով ներկայացված գանգատները 1998թ. նոյեմբերի մեկին փոխանցվեցին Դատարան: 2002թ. հուլիսի 2-ին Պալատը գործի ընդդատությունը զիջեց Մեծ պալատին: Դատարանը թույլատրեց Իտալիայի և Ֆրանսիայի կառավարություններին որպես երրորդ կողմ ներկայացնելու գրավոր դիտողություններ՝ Կոնվենցիայի 36-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: 2002թ. նոյեմբերի 27-ին լսումներ տեղի ունեցան:

2003թ. մայիսի 6-ին կայացված վճռով Մեծ պալատը միաձայն որոշեց, որ դիմումատուների կողմից 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա

Ներկայացված գանգատն ընդունելի է, և 12 ձայնով ընդդեմ 5-ի՝ որ 6-րդ հոդվածի 1-ին կետը չի խախտվել:

(5) Perna v. Italy (Պերնան ընդդեմ Իտալիայի), no 48898/99

Դիմումատուն, Ջիանկարլո Պերնան, իտալացի լրագրող է, ով ծնվել է 1940թ.-ին և բնակվում է Յռոնում: 1993թ. նոյեմբերի 21-ին դիմումատուն իտալական «Il Giornale» պարբերականում տպագրում է դատական ծառայող Ջիանկարլո Կասելլիի մասին մի հոդված, որը այդ ժամանակ Պալերմոյի դատախազության պետն էր: Հոդվածի վերնագիրն էր «Կասելլի, սպիտակ մազափնջով դատավավորը» («Caselli, il ciuffo biancodella giustizia»), իսկ ենթավերնագիրն էր՝ «Կրոնական կրթությունը, կոմունիստական միլիտանտիզմը ինչպես իր ընկեր փիլանտը...» («Scuola dai preti, militanza comunista come l'amico Violante»): Հոդվածը նախ և առաջ քննադատում էր պարոն Կասելլիի քաղաքական միլիտանտիզմը, հիշատակելով «երդունը սուրբ երրորդությանը. Աստծուն, օրենքին և Բուտեջ Օսկյուռ փողոցին (Իտալիայի նախկին կոմունիստական կուսակցության (PCI), իսկ հետագայում ձախակողմյա դեմոկրատական կուսակցության նստավայրը (PDS)) («un triplo giuramento di obbedienza. A Dio, alla Legge, a Botteghe Oscure»): Հոդվածում պարոն Կասելլին նաև մեղադրվում էր Իտալիայի բոլոր քաղաքների դատախազությունների նկատմամբ հսկողություն իրականացնելու ծրագրին մասնակցելու և քրեական գործերով գաղտնի գործակալ (*petito*) Տ. Բուսկետային օգտագործելու համար, ինչը նպատակ ուներ խաթարել Իտալիայի նախկին վարչապետ՝ Ջուլիո Անդրեոտիի քաղաքական կարիերան, նրան մեղադրելով մաֆիային օգնելու և նրանց հետ համագործակցելու համար (*Appoggio esterno alla mafia*), ամբողջովին գիտակցելով, որ նա պարտավոր կլինի կարճել գործը ապացույցների բացակայության հիմքով:

Քննելով պարոն Կասելլիի կողմից զրպարտության մասին ներկայացված բողոքը, 1996թ. հունվարի 10-ին Մոնզայի դատարանը պարոն Պերնային և պարբերականի տնօրենին մեղավոր ճանաչեց զրպարտության մեջ: Վերջիններս պատժվեցին համապատասխանաբար 1,500,000 և 1,000,000 իտալական լիրա տուգանքով (ITL) (մոտավորապես 775 և 515 եվրո) և վնասների, դատական ընթացակարգի հետ կապված ծախսերի հատուցմամբ, որոնք կազմում էին 60,000,000 լիրա (ITL) (մոտավորապես 31,000 եվրո), ինչպես նաև հայցվորի կողմից կատարված ծախսերի հատուցմամբ. վճռով նրանց վրա է դրվել նաև վճիռը հրատարակելու պարտականությունը: Պարոն Պերնան վերաքննիչ բողոք բերեց: Միլանի վերաքննիչ դատարանը 1997թ. հոկտեմբերի 28-ին առանց բավարարման թողեց նրա հայցը: Դատարանը գտավ, որ հոդվածի այն մասը, որը վերաբերում էր «երդմանը սուրբ երրորդությանը» զրպարտող բնույթ ուներ, քանի որ այն նշում էր քաղաքական կուսակցության հրահանգներից կախվածության մասին: Ինչ վերաբերում է հոդվածի հաջորդ մասին, ապա դատարանը գտավ, որ պրն. Կասելլիի վարքագծի վերաբերյալ մեղադրանքները՝ կապված նրա, որպես Պետական իրավական ծառայության անդամի, լիազորությունների իրականացման հետ, շատ լուրջ էին և խիստ զրպարտող, այնքանով, որքանով դրանք հաստատված չէին որևէ ապացույցով:

Դատարանն անհրաժեշտ չհամարեց ուսումնասիրել հայցվորի կողմից ներկայացված ապացույցները՝ հիմք ընդունելով այն, որ պարոն Կասելլիի քաղաքական պատկանելիության և պարոն Անդրեոտիի դեմ իրականացվող վարույթի ժամանակ «pentito»-ի օգտագործման վերաբերյալ իր կողմից արված հայտարարությունները չունեին զրպարտող բնույթ և հետևաբար ոչ մի ազդեցություն չունեին դատական քննության վրա: Վճռաբեկ դատարանն անփոփոխ թողեց վերաքննիչ դատարանի վճիռը:

Գանգատը ներկայացվել է 1999թ. մարտի 22-ին և հայտարարվել է ընդունելի 2000թ. դեկտեմբերի 14-ին: Դատարանը 2001թ. հուլիսի 25-ի իր վճռով միաձայն վճռեց, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի և դրա 3-րդ կետի d) ենթակետի խախտում տեղի չի ունեցել: Մյուս կողմից դատարանը միաձայն վճռեց, որ տեղի է ունեցել 10-րդ հոդվածի խախտում՝ կապված դիմումատուի դատապարտման հետ, քանի որ վերջինս օգտագործելով սինվոլիկ արտահայտություններ, մեղադրել է բարձր կոչում ունեցող իտալացի դատավորին նախկին կոմունիստական կուսակցությանը խոնարհման երդում տալու մեջ:

Կառավարությունը և դիմումատուն պահանջեցին գործը հանձնել Մեծ պալատին: 2001թ. դեկտեմբերի 12-ին Մեծ պալատի հանձնախումբը ընդունեց այդ պահանջը: Լուսնը տեղի ունեցավ 2002թ. սեպտեմբերի 25-ին, որի ժամանակ պարոն Կասելլին գրավոր դիտողություններ ներկայացրեց և նաև մասնակցեց լսմանը որպես երրորդ կողմ (Դատարանի կանոնակարգի 61-րդ կանոնի 3-րդ կետ):

2003թ մայիսի 6-ի վճռով Մեծ պալատը միաձայն վճռեց, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը և դրա 3-րդ կետի d) ենթակետը չեն խախտվել և 16 ձայնով ընդդեմ մեկի, որ 10-րդ հոդվածը չի խախտվել:

(6) Sahin v. Germany (Սահինն ընդդեմ Գերմանիայի), no. 30943/96

**(7) Sommerfeld v. Germany (Սոմմերֆելդն ընդդեմ Գերմանիայի),
no.31871/96**

Ասիմ Սահինը ծնվել է 1950թ.-ին և իրադարձությունների ծավալման ժամանակ հանդիսանում էր Թուրքիայի քաղաքացի: Ավելի ուշ նա ստացավ Գերմանիայի քաղաքացիություն: Նա արտասանունական կապից 1988թ.-ին ծնված երեխայի հայր է: Նա ճանաչել էր իր հայրությունը և մշտապես այցելում էր իր աղջկան, սակայն 1990թ. հոկտեմբեր ամսից աղջկա մայրը արգելեց բոլոր շփումները նրանց միջև: 1990թ դեկտեմբերին դիմումատուն այցելության իրավունք ստանալու պահանջով դիմեց Վիսբադենի քաղաքային դատարան, սակայն դատարանը առանց բավարարման թողեց իր հայցը: Նրա բողոքները նույնպես մնացին առանց բավարարման:

Մանֆրեդ Սոմմերֆելդը ծնվել է 1953թ.-ին և Գերմանիայի քաղաքացի է: Նա արտասանունական կապից 1981թ.-ին ծնված երեխայի հայր է: Նա ճանաչել է իր հայրությունը և այդ երեխայի մոր հետ ապրել մինչև նրանց բաժանումը 1986թ.-ին, որից հետո մայրը արգելել է բոլոր շփումները հոր և երեխայի միջև: 1990թ հոկտեմբերի 2-ին պարոն Սոմմերֆելդը այցելության իրավունք ստանալու պահանջով դիմեց Ռոստոկի քաղաքային դատարան, սակայն, 1992թ հուլիսի 1-ին հրաժարվեց իր հայցից, այն բանից հետո, երբ

Նրա աղջիկը բազմիցս հայտարարեց, որ չի ցանկանում շփվել իր հետ: 1993թ սեպտեմբերին դիմումատուին ներկայացրեց իր երկրորդ հայցը: 1994թ Քաղաքային դատարանը նրա հայցը առանց բավարարման թողեց: Պարոն Սոմմերֆելդի բողոքները նույնպես մնացին առանց բավարարման:

Գանգատները Մարդու իրավունքների եվրոպական Հանձնաժողով են ներկայացվել համապատասխանաբար 1993թ հունիսի 16-ին և 1995թ հունիսի 7-ին և փոխանցվել են Դատարան 1998թ նոյեմբերի 1-ին: 2000թ դեկտեմբերի 12-ին երկու գործերը հայտարարվեցին մասնակի ընդունելի: Պալատի կողմից 2001թ հոկտեմբերի 11-ին կայացված վճիռներով Դատարանը եզրակացրեց, 5 ձայնով՝ ընդդեմ 2-ի, որ երկու գործերով էլ տեղի է ունեցել 8-րդ և 14-րդ հոդվածների խախտում: Սոմմերֆելդի գործով Դատարանը նաև վեցն ընդդեմ մեկի ձայների հարաբերակցությամբ վճռեց, որ առկա է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

2002 թվականի հունվարի 9-ին Կառավարությունը խնդրեց երկու գործերն էլ փոխանցել Մեծ պալատ և 2002 թվականի մարտի 27-ին Մեծ պալատի հանձնախումբը բավարարեց այդ խնդրանքը:

Սահիմի գործով 2003 թվականի հուլիսի 8-ին կայացված վճռով Մեծ պալատը տասներկուսն ընդդեմ հինգի ձայների հարաբերակցությամբ վճռեց, որ 8-րդ հոդվածի խախտում առկա չէ, և միաձայն վճռեց, որ առկա է 8-րդ հոդվածի համակցությամբ 14-րդ հոդվածի խախտում:

Սոմմերֆելդի գործով նույնպես 2003 թվականի հուլիսի 8-ին կայացված վճռով, Մեծ պալատը ձայների տասնչորսն ընդդեմ երեքի հարաբերակցությամբ որոշեց, որ 8-րդ հոդվածի խախտում առկա չէ, տասն ընդդեմ յոթի ձայների հարաբերակցությամբ որոշեց, որ առկա է 8-րդ հոդվածի համակցությամբ 14-րդ հոդվածի խախտում, միաձայն որոշեց, որ առկա է 8-րդ հոդվածի համակցությամբ 14-րդ հոդվածի խախտում այնքանով, որքանով որ հետագա բողոքարկման հնարավորությունը բացառվել էր օրենքի նորմի ուժով, և միաձայն որոշեց, որ 6-րդ հոդվածով առանձին վերցված կամ 14-րդ հոդվածի հետ համատեղ, քննության անհրաժեշտություն չկա:

(8) Hatton v. the United Kingdom (Հատտոն ընդդեմ Միացյալ Թագավորության), no.36022197

Ութ դիմումատուները, որոնք բոլորն էլ Միացյալ Թագավորության քաղաքացիներ են, բնակվում են կամ բնակվում էին Լոնդոնի Հիդրոու օդանավակայանի մոտ: Դիմումատուներն են՝ Ռուբ Հատտոնը, որը ծնվել է 1963թ և բնակվում է արևելյան Շինում, Պետեր Թայքը, որը ծնվել է 1965թ և բնակվում է Հոունսլոուում, Ջոն Հարթլեյը, որը ծնվել է 1948թ. և բնակվում է Ռիչմոնդում, Ֆիլիպպս Էդմունդսը, որը ծնվել է 1954թ և բնակվում է արևելյան Տվիքենհամում, Ջոն Կավալլան, որը ծնվել է 1925թ. և 1970-1996թթ բնակվել է Այսլվորֆում, Ջեֆրեյ Թոմասը, որը ծնվել է 1928թ և բնակվում է Քյուում, Ռիչարդ Բիրդը, որը ծնվել է 1933թ և բնակվում է Վինսդորում, և Թոնի Անդերսոնը, որը ծնվել է 1932թ և բնակվում է Թաուչեն Էնդում:

Մինչև 1993թ. հոկտեմբեր ամիսը Հիդրոու օդանավակայանում գիշերային թռիչքների ժամանակ պատճառված աղմուկը վերահսկվում էր ընդհանուր թռիչքների և վայրէջքների թվաքանակի սահմանափակումներով:

Սակայն դրանից հետո առաջացող աղմուկը կարգավորվում էր աղմուկի քվոտայի համակարգի միջոցով, որի համաձայն օդանավերից յուրաքանչյուրի համար նախատեսվում էր «քվոտայի չափ» («Quota Count-QC»), ինչքան աղմկոտ էր օդանավը, այդքան ավելի բարձր էր դրա քվոտայի չափը (QC): Այս համակարգը հնարավորություն էր տալիս ավիակազմակերպություններին ընտրել՝ օգտագործել մեծ թվով անաղմուկ օդանավեր, թե փոքր թվով աղմկոտ օդանավեր, այնպես որ չխախտվեն աղմուկի քվոտայի սահմանները: Նոր համակարգն առավել խիստ սահմանափակումներ էր նախատեսում 23:00-ից մինչև ժամը 6-ը և ավելի մեղմ սահմանափակումներ՝ ժամը 23:00 մինչև 23:30 և 18.00-ից մինչև 19.00-ը:

Մի շարք համայնքների կողմից դատական վերահսկողության մասին ներկայացված դիմումից հետո, այդ համակարգը ճանաչվեց անհամապատասխան այն իրավական նորմին, որը պահանջում էր սահմանել օդանավերի կոնկրետ քանակ, և ոչ թե աղմուկի քվոտա: Դրա արդյունքում, կառավարությունը գիշերային ժամանակ օդանավերի թռիչքների թույլատրելի քանակ սահմանեց: Դատական երկրորդ ստուգմամբ բացահայտվեց, որ կառավարության կողմից, այս համակարգի վերաբերյալ կազմակերպված խորհրդատվությունը անցակցվել էր օրենքի խախտմամբ և 1995 թվականի մարտ և հունիս ամիսներին կառավարությունը մշակեց նոր խորհրդատվական փաստաթղթեր: 1995թ օգոստոսի 16-ին Տրանսպորտի Պետական Քարտուղարությունը հայտարարեց, որ նոր համակարգի հետ կապված մանրամասները, ինչպես և նախորդինը, կիրառարակվեն: Համայնքները բողոքարկեցին այդ որոշումը, սակայն նրանց բողոքն առանց բավարարման թողնվեց:

Գանգատը Մարդու իրավունքների եվրոպական Հանձնաժողով ներկայացվեց 1997թ. մայիսի 6-ին և փոխանցվեցին Դատարան 1998թ նոյեմբերի 1-ին: Գանգատը հայտարարվեց ընդունելի 2000թ. մայիսի 16-ին:

2001թ. հոկտեմբերի 2-ին Պալատի կողմից սույն գործով կայացված վճռով Դատարանը, 5 ձայնով ընդդեմ 2-ի վճռեց, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում և 6 ձայնով ընդդեմ 1-ի՝ որ խախտվել է 13-րդ հոդվածը:

2001թ դեկտեմբերի 19-ին կառավարությունը խնդրեց գործը հանձնել Մեծ պալատին: 2002թ մարտի 27-ին Մեծ պալատի հանձնախումբը ընդունեց այդ խնդրանքը: Լսումը տեղի ունեցավ 2002թ նոյեմբերի 13-ին:

2003թ հուլիսի 8-ին կայացած վճռով, Մեծ պալատը, 12 ձայնով ընդդեմ 5-ի վճռեց, որ 8-րդ հոդվածը չի խախտվել և 16 ձայնով ընդդեմ 1-ի՝ որ խախտվել է 13-րդ հոդվածը:

(9) Ezech and Connors v. the United Kingdom, (եզեհն ու Բոննորսն ընդդեմ Միացյալ Թագավորության) nos 39665/98 and 40086/98

Դիմումատուներն են Միացյալ Թագավորության քաղաքացիներ՝ Օկեչուկվիլ Էզեհը ծնված 1967թ և Լորենս Բոննորսը, ծնված 1954թ.: Երկուսն էլ ներկայումս գտնվում են բանտում՝ Միացյալ Թագավորությունում: Երկարաժամկետ ազատազրկման պատիժը կրելու ժամանակ դիմումատուներին բանտի կանոններին համապատասխան մեղադրանք առաջադրվեց կարգապահական խախտում կատարելու մասին: Պարոնն Էզեհը

մեղադրվեց սպառնալից խոսելանոճ օգտագործելու, իսկ պարոն Քոննորսը՝ բանտի հսկիչներից մեկին վիրավորելու մեջ: Հաստատվեց, որ մեղադրանքներից յուրաքանչյուրն ուներ իր համարժեքը ներպետական քրեական օրենքում: Դիմումատուների պահանջներ ուղղված փաստաբանի ներկայությամբ նիստի անցկացմանը, մերժվեցին բանտի պետի կողմից:

Բանտի տնօրենի կողմից իրականացված քննության արդյունքում, երկու դիմումատուներն էլ մեղավոր ճանաչվեցին: Քննության ընթացքում դիմումատուներից և ոչ մեկին փաստաբան չտրամադրվեց: Առկա առավելագույն հնարավոր պատժը 42 օր լրացուցիչ կալանքն էր. պարոն Էգեհը պատժվեց 40 օր կալանքով, իսկ պարեն Քոննորսը՝ 7 օր կալանքով: Դրանից հետո դիմումատուներին չթույլատրվեց բանտի պետի կայացրած որոշման դատական կարգով վերանայման համար դիմում ներկայացնել:

Գանգատները ներկայացվեցին Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով 1998թ. հունվարի 23-ին և 29-ին և 1998թ. նոյեմբերի 1-ին փոխանցվեցին Դատարան:

2002թ. հուլիսի 15-ին Պալատի կողմից կայացված վճռով Դատարանը միաձայն եզրակացրեց, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ կետի c) ենթակետով երաշխավորված դիմումատուների իրավունքների խախտում:

2002թ. հոկտեմբերի 8-ին Միացյալ Թագավորության կառավարությունը պահանջեց գործը հանձնել Մեծ պալատին և 2002թ. նոյեմբերի 6-ին Մեծ պալատի հանձնախումբն ընդունեց այդ պահանջը: Դատական լսումը տեղի է ունեցել 2003թ մարտի 5-ին:

2003թ. հոկտեմբերի 9-ին կայացված վճռով, Մեծ պալատը վճռեց, 11 ձայնով ընդդեմ 6-ի, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ կետի c) ենթակետի խախտում:

(10) Silvenko and others v. Latvia (Սիլվենկոն և այլոք ընդդեմ Լատվիայի), no.487321/98

Դիմումատուները՝ Տատյանա Սիլվենկոն և նրա դուստր՝ Կարինա Սիլվենկոն, ազգությամբ ռուս Լատվիայի նախկին քաղաքացիներ են: Ներկայումս նրանք ապրում են Ռուսաստանի Կուրսկ քաղաքում: Տատյանա Սիլվենկոն, որի հայրը Սովետական բանակի սպա էր, ծնվել էր Էստոնիայում 1959թ.-ին և իր ծնողների հետ միասին մեկ ամսական հասակում տեղափոխվել էր Լատվիա: 1980թ նա ամուսնացավ մեկ այլ Սովետական բանակի սպա՝ Նիկոլայ Սլովենկոյի հետ, և 1981թ.-ին Լատվիայում ծնվեց իր դուստր Կարինան: Լատվիայի անկախությունից հետո դիմումատուները Լատվիայում գրանցվեցին որպես «Նախկին ԽՍՀՄ քաղաքացիներ»: 1994թ.-ին առաջին դիմումատուի ամուսինը նույն տարվա ընթացքում զորացրվեց զինվորական ծառայությունից (Ռուսաստանի Դաշնության՝ 1992թ. հունվարին ԽՍՀՄ զինված ուժերի նկատմամբ իր իրավագործությունը ճանաչելու արդյունքում) և դիմում ներկայացրեց ժամանակավոր կացության իրավունք ստանալու համար՝ վկայակորելով իր ամուսնունկությունը Լատվիայի մշտական քաղաքացու հետ: Նրա դիմումը մերժվեց, հիմք ընդունելով, որ ինքը պարտավոր է հեռանալ

Լատվիայից 1994թ.-ի ապրիլին ընդունված՝ Ռուսական Զինված Ուժերը հետ կանչելու մասին Պայմանագրի համաձայն, որը հիմնականում տարածվում էր 1992թ. հունվարի 28-ին ծառայության մեջ գտնվող ռուս զինծառայողների վրա: Ի հետևանք դրան, դիմումատուները հանվեցին գրանցումից:

1996թ. օգոստոսին որոշում ընդունվեց ընտանիքի երեք անդամներին արտաքսել երկրից: Վերջիններս վտարվեցին Ռիգայում գտնվող իրենց բնակարանից, որից հետո Նիկոլայ Սլիվենկոն ստիպված մեկնեց Ռուսաստան: Սակայն դիմումատուները դիմեցին դատարան Լատվիայից իրենց արտաքսելու մասին որոշումը վիճարկելու նպատակով: Լատվիայի դատական մարմիններն ի վերջո գտան, որ Նիկոլայ Սլիվենկոն ստիպված էր լքել երկիրը, և որ դիմումատուներին գրանցումից հանելու մասին որոշումը օրինական էր: 1998թ հոկտեմբերի 28-ին դիմումատուները ձերբակալվեցին, որից հետո նրանց տեղափոխեցին միգրանտների համար նախատեսված հատուկ կենտրոն: Հաջորդ օրը նրանց ազատեցին Քաղաքացիության և Միջազգային հարցերով զբաղվող մարմնի տնօրենի հրահանգով, հիմք ընդունելով, որ նրանց ձերբակալությունը «վաղաժամ» էր, քանի որ նրանք բողոք էին ներկայացրել այդ պետական մարմին: Ինչևէ, ավելի ուշ նրանց կարգադրվեց լքել երկիրը և 1999թ. մարտի 16-ին երկրորդ դիմումատուն կրկին պահվեց կալանքի տակ՝ 30 ժամ տևողությամբ: 1999թ. հուլիսի 11-ին դիմումատուները տեղափոխվեցին Ռուսաստան Նիկոլայ Սլիվենկոյին միանալու համար, որից հետո ստացան Ռուսաստանի քաղաքացիություն: Արտաքսման մասին որոշմամբ դիմումատուներին արգելվեց հետագա հինգ տարիների ընթացքում վերադառնալ Լատվիա (մինչև 2001թ. օգոստոս ամիսը), բացի դրանից նրանց թույլատրվեց գտնվել Լատվիայում տարեկան ոչ ավել քան 90 օր: Տատյանա Սլիվենկոյի ծնողները, ովքեր ծանր հիվանդ էին, մնացին Լատվիայում:

Գանգատը ներկայացվեց Մարդու իրավունքների եվրոպական Հանձնաժողով 1999թ. հունվարի 28-ին և փոխանցվեց Դատարանի Մեծ պալատին 2001թ. հունիսի 14-ին: Գանգատի ընդունելիության և էության վերաբերյալ լսումները տեղի ունեցավ 2001թ. նոյեմբերի 14-ին: 2002թ. հունվարի 23-ին գանգատը հայտարարվեց մասնակի ընդունելի:

2003թ. հոկտեմբերի 9-ին կայացված վճռով Մեծ պալատը եզրակացրեց, 11 ձայնով՝ ընդդեմ 6-ի, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում, 11 ձայնով՝ ընդդեմ 6-ի, որ անհրաժեշտություն չկար առանձին քննել 14-րդ հոդվածի հիման վրա դիմումատուների բողոքները, 16 ձայնով՝ ընդդեմ 1-ի, որ տեղի չի ունեցել 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում և, միաձայն, որ անհրաժեշտություն չկար քննել 5-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա դիմումատուների բողոքները:

(11) Cooper v. the United Kingdom (Կուպերն ընդդեմ Միացյալ Թագավորության), no.48843/99

(12) Grieves v. the United Kingdom (Գրիվեսն ընդդեմ Միացյալ Թագավորության), no.57067/00

Երկու գործերն էլ վերաբերվում էին այն հարցին թե արդյո՞ք Միացյալ Թագավորության Զինվորական դատարանի կողմից իրականացրած դատական քննությունը, որը իրականացվել էր 1996թ. Զինված ուժերի մասին

օրենքի ուժի մեջ մտնելու արդյունքում ստեղծված համակարգի պայմաններում, համապատասխանում էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին կետին:

Գրահան Կուլտերը Միացյալ Թագավորության քաղաքացի է, ծնվել է 1968թ.-ին և բնակվում է Բիրմենգհեմում: Իրադարձությունների ծավալման ժամանակ նա ծառայում էր Բրիտանական օդային զինված ուժերում (*Royal Air Force «RAF»*): 1968թ.-ի Գողության մասին ակտը խախտելու համար, պարոն Կուլտերը 1998թ. փետրվարի 18-ին Օդային ուժերի Զինվորական դատարանի կողմից մեղավոր ճանաչվեց գողություն կատարելու մեջ և պատժվեց ազատազրկմամբ 50 օր ժամկետով, ինչպես նաև նա հեռացվեց Զինված Ուժերից և զրկվեց իր զինվորական կոչումներից: Զինվորական դատարանը կազմված էր մշտապես գործող նախագահից, երկու այլ ավելի ցածր կոչում ունեցող սպաներից և փաստաբան-դատավորից: Մշտապես գործող նախագահն իր պաշտոնավարման վերջին տարում էր՝ նախքան կենսաթոշակի անցնելը, և 1997թ օգոստոս ամսից ի վեր նա առաջխաղացում էր ստացել: Մյուս երկու անդամները 1993թ մասնակցել են հատուկ դասընթացի, որը ներառում էր կարգապահական վարույթի վերաբերյալ ուսուցում: 1998թ. ապրիլի 3-ին, Վերահսկող հանձնաժողովը, ստանալով Գլխավոր փաստաբան-դատավորի եզրակացությունը, անփոփոխ թողեց զինվորական դատարանի կողմից կայացված վճիռն ու պատժի չափը: Վերաքննիչ զինվորական դատարանը դիմումատուի բողոքն առանց բավարարման թողեց:

Մարկ Անտոնի Գրիվեսը Միացյալ Թագավորության քաղաքացի է, ծնվել է 1968թ.-ին և ապրում է Դեվոնում: Իրադարձությունների ծավալման ժամանակ նա ծառայում էր Բրիտանական ծովային զինված ուժերում (*Royal Navy*): 1998թ. հունիսի 18-ին պարոն Գրիվեսը Ծովային զինվորական դատարանի կողմից մեղավոր ճանաչվեց մարդու դեմ ուղղված հանցագործությունների 1861թ օրենքը խախտելու հետևանքով դիտավորությամբ մարմնական վնասվածքներ պատճառելու մեջ: Նա պատժվեց երեք տարի ազատազրկմամբ, իչպես նաև հեռացվեց բանակից, զրկվեց իր կոչումներից և 700 փաունդ սթերլինգ վնասների հատուցման պահանջով: Զինվորական դատարանի կազմում էին Նախագահը (Ծովային գործերի կապիտան), չորս ծովային սպաներ և մեկ փաստաբան-դատավորը, ով ծառայում էր որպես ծովային սպա և աշխատում էր որպես փաստաբան, զբաղեցնելով զինվորական իրավախորհրդատուի պաշտոն *FLEET*-ում (զորամիավորում, որը պատասխանատու է ծովային բոլոր նավերի սպասարկման և տեղակայման համար): 1998թ սեպտեմբերի 29-ին Զինվորական Խորհուրդը՝ ստանալով Ծովային ուժերի փաստաբան-դատավորի եզրակացությունը (*JAF*), անփոփոխ թողեց զինվորական դատարանի վճիռը և նշանակված պատիժը: Վերաքննիչ զինվորական դատարանը առանց բավարարման թողեց դիմումատուի բողոքը:

2003թ. դեկտեմբերի 16-ին Կուլտերի գործով կայացված վճռով, Մեծ պալատը միաձայն եզրակացրեց, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտումն առկա է:

2003թ. դեկտեմբերի 16-ին Գրիվեսի գործով կայացված վճռով, Մեծ պալատը միաձայն եզրակացրեց, որ առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

VIII. Երրորդ կողմի մասնակցությունը

Հետևյալ գործերով նախագահը, Դատարանի կանոնակարգի 61-րդ կանոնի 3-րդ կետի համապատասխան, թույլատրել է երրորդ կողմերին ներկայացնել գրավոր դիտողություններ.

(1) **Mamatkulov and Abdurasalovic v. Turkey** (Մամատկուլովն ու Աբդուրասալովիչն ընդդեմ Թուրքիայի) nos 46827/99 and 46951/99
(տե՛ս Գ IV լուխը)

(2) **Vo v. France**, (Վոն ընդդեմ Ֆրանսիայի) no. 53924/00
(Տե՛ս V Գլուխը)

(3) **Senator Lines v.15 Contracting States** (Սենատոր Լայնսն ընդդեմ 15 Պայմանավորվող կողմերի)

IX. 43-րդ հոդվածի համաձայն Մեծ պալատի Հանձնախմբի կողմից քննության առնված գործեր

Տե՛ս կցված Հավելվածը:

X. 2004 թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Մեծ պալատի քննության ներքո գտնվող գործերի ցանկ

(1)	8787/99	Ilascu v. Moldova and Russia
(2)	31443/96	Broniowski v. Poland
(3)	44158/98	Gorzelik v. Poland
(4)	26307/95	Taksin Acar v. Turkey
(5)	39748/98	Maestri v. Itali
(6)	48939/99	Oneryildiz v. Turkey
(7)	56679/00	Azinas v. Cyprus
(8)	56672/00	Senator Lines v. 15 States
(9)		Advisory Opinion
(10)	71503/01	Assanidze v. Georgia
(11)	44912/98	Kopecky v. Slovakia
(12)	46827/99	Mamatkulov and Abdurasulovic v. Turkey
(13)	53924/00	Vo. v. France
(14)	47287/99	Parez v. France
(15)	46221/99	Ocalan v. Turkey
(16)	30324/96)	Smoleanu v. Romania
	35671/97)	Lindner and Hammermayer v. Romania
	31549/96)	Popovic and Dumitrescu v. Romania
(17)	33348/96	Cumpana and Mazare v. Romania
(18)	39647/98)	Edwards v. the United Kingdom
	40461/98)	Lewis v. the United Kingdom
(19)	49017/99	Pedersen and Baadsgaard v. Denmark

Վերալսումների համար 2003 թ.-ին ներկայացված խնդրանքների ցանկ (կառավարությունների և դիմումատուների կողմից)							
Գանգատ թիվ	Դիմումատու	պետություն	Բաժա ն- մունք	Վճիռ	Խնդրանք	Հանձնախու մբ/ամսաթիվ	Հանձնախմ բի որոշումը
20652/92	Djavit An	Թուրքիա	III	20.2.03	կառավարություն	9.7.03	մերժում
25141/94	DEP & Dicle	Թուրքիա	IV	10.12.02	կառավարություն	21.5.03	մերժում
27265/95	Terazzi S.A.S.	Իտալիա	IV	17.10.02	կառավարություն	21.5.03	մերժում
27824/95	Posti & Rahko	Ֆինլանդիա	IV	24.9.02	կառավարություն և դիմումատու	21.5.03	մերժում
29973/96	Golea	Ռումինիա	II	17.12.02	դիմումատու	21.5.03	մերժում
30324/96	Smoleanu	Ռումինիա	II	3.12.02	դիմումատու	21.5.03/հետ աձգում 24.09.03	ԸՆԴՈՒՆՈՒՄ
30502/96	Yiltas Yildiz Turistik Tesisleri A.S.	Թուրքիա	III	24.04.03	կառավարություն	24.09.03	մերժում
31549/96	Popovici & Dumitrescu	Ռումինիա	II	4.3.03	դիմումատու	9.7.03/հետա ձգում 24.09.03	ԸՆԴՈՒՆՈՒՄ
31678/96	Gheorghiu	Ռումինիա	II	17.12.02	դիմումատու	21.5.03	մերժում
32926/96	Canciovici a.o.	Ռումինիա	II	26.11.02	դիմումատու	21.5.03/հետ աձգում 24.09.03	մերժում
33348/96	Cumpana & Mazare	Ռումինիա	II	29.07.03	դիմումատու	03.12.03	ԸՆԴՈՒՆՈՒՄ
33993/96	Messina (3)	Իտալիա	I	24.10.02	դիմումատու	21.5.03	մերժում
34619/97	Janosevic	Շվեդիա	F.I	23.7.02	դիմումատու	21.5.03	մերժում
35671/97	Lindner & Hammermayer	Ռումինիա	II	3.12.02	դիմումատու	21.5.03/հետ աձգում 24.09.03	ԸՆԴՈՒՆՈՒՄ
36186/97	Timar	Հունգարիա	II	25.2.03	դիմումատու	9.7.03	մերժում
36268/97	Clucher	Իտալիա	I	17.04.03	կառավարություն	24.09.03	մերժում

Մեծ Պալատ. 2003թ-ի Տարեկան զեկույց
 Ոչ պաշտոնական քարզմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

36378/97	Bertuzzi	Ֆրանսիա	II	13.2.03	դիմումատու	21.5.03	մերժում
36985/97	Vastberga Taxi AB & Vulic	Շվեդիա	F. I	23.7.02	դիմումատու	21.5.03	մերժում
37021/97	Zeyper Avci	Թուրքիա	III	6.2.03	դիմումատու	9.7.03	մերժում
37290/97	Wittek	Գերմանիա	III	12.12.02	դիմումատու	9.7.03	մերժում
37372/97	Walston	Նորվեգիա	IV	03.06.03	դիմումատու	03.12.03	մերժում
37568/97	Bohmer	Գերմանիա	III	3.10.02	դիմումատու	21.5.03	մերժում
38365/97	Thieme	Գերմանիա	III	17.10.02	դիմումատու	21.5.03	մերժում
39050/97	Jantner	Ալովակիա	IV	4.3.03	դիմումատու	9.7.03	մերժում մերժում
39269/98	Kepenerov	Բուլղարիա	I	31.07.03	դիմումատու	03.12.03	մերժում
39339/98	M.M.	Նիդեռլանդներ	II	08.04.03	կառավարություն	24.09.03	մերժում
39482/98	Dowsett	Անգլիա	II	24.06.03	դիմումատու	24.09.03	մերժում
39597/98	Biskupska	Լեհաստան	IV	22.07.03	դիմումատու	03.12.03	մերժում
39647/98 & 40461/98	Edwards & Lewis	Անգլիա	IV	22.07.03	կառավարություն	03.12.03	ԸՆԴՊԻՆՈՒՄ
40694/98	Sobanski	Լեհաստան	IV	21.1.03	դիմումատու	9.7.03	մերժում
41486/98	Borankova	Չեխիա	II	7.1.03	դիմումատու	21.5.03	մերժում մերժում
42276/98	Julien	Ֆրանսիա	III	14.11.02	դիմումատու	21.5.03	մերժում
42405/98	C.D.	Ֆրանսիա	II	7.1.03	դիմումատու	21.5.03	մերժում
43185/98	Price & Lowe	Անգլիա	II	29.07.03	դիմումատու	03.12.03	մերժում
43580/98	G.G.	Իտալիա	I	3.4.03	դիմումատու	9.7.03	մերժում
43657/98	Levai & Nagy	Հունգարիա	II	08.04.02	դիմումատու	24.09.03	մերժում
43719/98	Scotti	Ֆրանսիա	II	7.1.03	դիմումատու	21.5.03	մերժում
44179/98	Murphy	Իռլանդիա	III	10.07.03	դիմումատու	03.12.03	մերժում
44277/98	Stretch	Անգլիա	II	24.06.03	դիմումատու	03.12.03	մերժում
44306/98	Appleby and Others	Անգլիա	IV	06.05.03	դիմումատու	24.09.03	մերժում
44565/98	Theraube	Ֆրանսիա	III	10.10.02	դիմումատու	21.5.03	մերժում

Մեծ Պալատ. 2003թ-ի Տարեկան զեկույց
 Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

44672/98	Herz	Գերմանիա	III	12.06.03	դիմումատու	03.12.03	մերժում
44730/98	Serghides	Կիպրոս	II	10.06.03	դիմումատու	24.09.03	մերժում
44808/98	Mitchell & Holloway	Անգլիա	II	17.12.02	դիմումատու	21.5.03	մերժում
44912/98	Kopecky	Սլովակիա	IV	7.1.03	կառավարություն	21.5.03	ԸՆԴՈՒՆՈՒՄ
45356/99	Conti	Իտալիա	I	10.07.03	դիմումատու	03.12.03	մերժում
45835/99	Hesse-Anger	Գերմանիա	III	6.2.03	դիմումատու	21.5.03	մերժում
46215/99	Faivre	Ֆրանսիա	II	17.2.02	դիմումատու	21.5.03	մերժում
46221/99	Ocalan	Թուրքիա	F.I	12.3.03	կառավարություն և դիմումատու	9.7.03	ԸՆԴՈՒՆՈՒՄ
46355/99	Tsirikakis	Հունաստան	I	արդարա ցի հատ. 23.1.03	դիմումատու	9.7.03	մերժում
46827/99 & 46951/99	Mamatkulov & Abdurasulovic	Թուրքիա	F.I	6.2.03	կառավարություն	21.5.03	ԸՆԴՈՒՆՈՒՄ
47227/99	Bakova	Սլովակիա	IV	12.11.02	դիմումատու	21.5.03	մերժում
47541/99	Vasilopoulou	Հունաստան	I	26.9.02	դիմումատու	21.5.03	մերժում
48161/99	Motais de Narbonne	Ֆրանսիա	II	27.05.03	կառավարություն	24.09.03	մերժում
48221/99	Berger	Ֆրանսիա	II	3.12.02	դիմումատու	21.5.03	մերժում
48568/99	Schmidtova	Չեխիա	II	22.07.03	դիմումատու	03.12.03	մերժում
49017/99	Pedersen & Baadsgaard	Դանիա	I	19.06.03	դիմումատու	03.12.03	ԸՆԴՈՒՆՈՒՄ
49198/99	Schiettecatte	Ֆրանսիա	II	8.4.03	դիմումատու	9.7.03	մերժում
49285/99	Rablat	Ֆրանսիա	II	29.04.03	դիմումատու	24.09.03	մերժում
50533/99	Motsnik	Էստոնիա	IV	29.04.03	դիմումատու	24.09.03	մերժում
50824/99	Azas	Հունաստան	I	19.9.02	դիմումատու	21.5.03	մերժում
51392/99	Gocer	Նիդեռլանդներ	III	3.10.02	դիմումատու	21.5.03	մերժում
52116/99	Viezies	Ֆրանսիա	II	15.10.02	դիմումատու	21.5.03	հետ վերադարձվ ել

Մեծ Պալատ. 2003թ-ի Տարեկան զեկույց
 Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

							Բաժանմունք
52464/99	Papadopoulos	Հունաստան	I	6.2.03	դիմումատու	21.5.03	մերժում
52518/99	Koral	Լեհաստան	IV	5.11.02	դիմումատու	21.5.03	մերժում
52763/99	Covezzi & Morselli	Իտալիա	I	09.05.03	դիմումատու	24.09.03	մերժում
52848/99	Papadopoulos	Հունաստան	I	9.1.03	դիմումատու	21.5.03	մերժում
52854/99	Ryabykh	Ռուսաստան	I	24.07.03	դիմումատու	03.12.03	մերժում
52903/99	Dactylidi	Հունաստան	I	27.3.03	դիմումատու	9.7.03	մերժում
53112/99	Borderie	Ֆրանսիա	II	27.05.03	դիմումատու	24.09.03	մերժում
53341/99	Hartman	Չեխիա	II	10.07.03	դիմումատու	03.12.03	մերժում
53652/00	Raf	Իսպանիա	IV	17.06.03	դիմումատու	24.09.03	մերժում
54283/00	G.L.	Իտալիա	III	3.10.02	դիմումատու	21.5.03	մերժում
54367/00	Bufferne	Ֆրանսիա	II	11.2.03	դիմումատու	9.7.03	մերժում
54528/00	Korellis	Կիպրոս	II	7.1.03	դիմումատու	21.5.03	մերժում
56927/00	Appeitto	Ֆրանսիա	II	25.2.03	դիմումատու	9.7.03	մերժում
57030/00	Asnar	Ֆրանսիա	II	17.06.03	դիմումատու	03.12.03	մերժում
57734/00	Raitiere	Ֆրանսիա	II	17.06.03	դիմումատու	24.09.03	մերժում
60545/00	Perhirin	Ֆրանսիա	II	4.2.03	դիմումատու	21.5.03	մերժում
62242/00	Gregoriou	Կիպրոս	II	25.3.03	դիմումատու	9.7.03	մերժում
62435/00	Pescador Valero	Իսպանիա	IV	17.06.03	դիմումատու	24.09.03	մերժում
65567/01	Piskura	Սլովակիա	IV	27.05.03	դիմումատու	24.09.03	մերժում
65811/01	Lemoine	Ֆրանսիա	II	29.04.03	դիմումատու	24.09.03	մերժում
67263/01	Mouisel	Ֆրանսիա	I	14.11.02	դիմումատու	21.5.03	մերժում
69145/01	Sika	Սլովակիա	IV	24.06.03	դիմումատու	24.09.03	մերժում
69700/01	Tierce	Սան Մարինո	II	17.06.03	կառավարություն	03.12.03	մերժում
77746/01	Kroenits	Լեհաստան	IV	25.02.02	դիմումատու	24.09.03	մերժում